Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 06.12.2023թ. չորեքշաբթի թիվ 50-51 (1127-1128)

Գյումրի

1915-ից 3 տարի անց՝ **1918-ին**, Սարդարապատի ճակատամարտի պատմական հաղթանակով հիմնադրվեց **Հայաստանի Հանրապետությունը: 1988թ. դեկտեմբերի 7-ի** երկրաշարժից 3 տարի անց՝ **1991թ. սեպտեմբերի 21-ի** հանրաքվեի փայլուն արդյունքով, վերստին վերականգնվեց հայոց **անկախ պետությունը**... Մեզ միշտ սեղմել են... եւ ժամանակների մեջ այնքան, որ դարձել ենք **զսպանակ**: **1988-ի փետրվարից** զսպանակն այլեւս սեղմվել չի կամենում. այն այսուհետեւ միայն **ընդարձակվելու է**... եւ ժամանակների մեջ այնքան, մինչեւ վերստին ստանա իր **նախնական** տեսքը...

«Աղետի գոտի» հասկացությունը վաղուց փոխարինվել է **«զարգացման գոտի»** հասկացությամբ... Ի հեճուկս երեւացող ու աներեւույթ բազմադեմ խարդավանքների, աղետների ու պատերազմների՝ Հայաստանը **վերածնվում է**... Փլատակների միջից ելած նորածիններն այսօր արդեն կերտում են վաղվա **Մեծ Հայաստանը**:

Երկրաշարժից առաջ **Գյումրին** Հայաստանի երկրորդ քաղաքն էր. արդյունաբերական, գիտական, կրթամշակութային խոշոր կենտրոն... Բայց ամենից առաջ Գյումրին Գյումրին էր պարզապես, որ ուներ իր ուրույն **դիմագիծը**, իր ինքնատիպ **քաղաքացին**, իր համով-հոտով **միջավայրը**... Հոռետեսները կարծում են, որ Գյումրին այլեւս հնարավոր չէ վերականգնել այնպես, ինչպես որ կար... Ճիշտ է, նոր կառույցները ներկայի գյումրեցիների համար կդառնան (դարձել են) տուն, դպրոց, մշակույթի օջախ կամ սպասարկող որեւէ հիմնարկություն, տարիների հետ կավելանա նաեւ բնակչության թիվը, բայց քաղաքն այլեւս չի վերագտնի իր **դեմքը**, միայն իրեն բնորոշ միջավայրը, միայն իրեն հատուկ **բարք ու վարքը**... Փորձենք լինել լավատես եւ հաավատալ, որ վերընձյուղված Գյումրին, ինչպես նաեւ **Վանաձորը**, **Սպիտակը**, տարիների հետ կդառնան ավելի գեղեցիկ, քան էին երկրաշարժից առաջ, կվերականգնեն միայն իրենց հատուկ միջավայրը, դիմագիծը...

Հայաստանը շատ քաղաքներ ու մայրաքաղաքներ է ունեցել: Ոչ պատահականորեն բնութագրվել է որպես **դեգերող մայրաքաղաքների երկիր**: Շատերն այդ հանգամանքը դիտել են որպես պատերազմների, ավարառությունների հետեւանք, երբեմն էլ բացատրել իբրեւ հայոց արքաների պարզ փառասիրություն. յուրաքանչյուր թագավոր ձգտում էր կառուցել ի՛ր մայրաքաղաքը: Փորձենք մեր թագակիր եւ գահակալ նախնիներին պատկերացնել ավելի իմաստուն. գուցե **ո՛ղջ Հայաստանը** ծաղկուն եւ բարգավաճ դարձնելու հեռահար միտո՞ւմն էր նոր մայրաքաղաք հիմնելու շարժառիթը: Չէ՞ որ Հայաստանը **քաղաք-պետություն չէր**, այլ հինավուրց հզոր մի երկիր՝ իր բնօրրան **Հայկական Լեռնաշխարհում** ինքնատիպ քաղաքակրթությամբ **մշտապես** զարգացող: Ամեն նոր մայրաքաղաք դառնում էր մի նոր **համազգային զարթոնքի** սկիզբ. ե՛ւ ճարտարապետությունը, իր քաղաքաշինական եւ արվեստի դրսեւորումներով, ե՛ւ մշակույթի մյուս բոլոր ոլորտները հարստանում էին **նոր դպրոցներով** եւ **ուղղություններով**...

Արդ, ի՞նչն է մեզ ստիպում առանց այդ էլ զսպանակի պես փոքրացած մեր հայրենիքում շարունակ **կենտրոնանալ** մի բնակավայրում կամ նրա շուրջ. թեկուզ եւ այն լինի ամենայն հայոց չքնաղագույն մայրաքաղաքը (թեեւ այն վաղուց այլեւս **վարդագույն** գեղեցկուհին չէ, այլ՝ ժամանակակից **եվրոպական** մի քաղաք, որ ժամանակի հետ իր դիմագծի **ազգային** երանգները փոխարինում է «**համամարդկայինով**»)... Ժամանակը չէ՞ մտածելու ընդարձակվելու, **տարածվելու** մասին... Մանավանդ, որ պետականորեն հաստատված է երկրի համաչափ զարգացման հայեցակարգ: Չհամարձակվե՞նք, արդյոք, մայրաքաղաքը, եթե ոչ ամբողջապես, գոնե մասնակիորեն տեղափոխել, ասենք՝ **Գյումրի, Գորիս, Վանաձոր**... Ի՞նչ ասել է մասնակիորեն. այս դեպքում նկատի ունենք որոշ գերատեսչություններ մայրաքաղաքից երկրի մյուս քաղաքներ տեղափոխելը: Ասենք, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը՝ Գյումրի, Պաշտպանության նախարարությունը (թերեւս՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբը)՝ Գորիս, էկոնոմիկայի նախարարությունը՝ Իջեւան եւ այլն: Երեւանը կբեռնաթափվի, **սահմանամերձ** շրջանները կամրանան, կբարգավաճեն... Հավատացե՛ք, սա ռոմանտիկ կամ խենթ գաղափար չէ, այլ ազգային անվտանգության տեսակետից կամ հոգեւոր մի նոր վերածնունդ կազմակերպելու առումով՝ հեռահար խելամիտ մի ծրագրի միտված՝ ուշադրության արժանի առաջարկ: Մանավանդ, որ մենք քաղաք-պետություն չենք, եւ անկախությունն էլ լոկ հռչակագիր չէ: Թեեւ օրախնդիր հոգսերով ծանրաբեռ, այնուամենայնիվ, խիզախենք մտածել վաղվա մասին:

Գ.Մ.

Գիտություն

Ոլորտը՝ պետության առաջնահերթություն

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** մասնակցել է *«Հայաստանի գիտատեխնոլոգիական եւ նորարարական ազգային համակարգ. խնդիրներից դեպի վերածնունդ»* խորագրով կոնֆերանսին, որն անցկացրել է *«Գիտուժ»* նախաձեռնությունը:

Կանֆերանսին մասնակցել են նաեւ Ազգային ժողովի նախագահի տեղակալ **Հակոբ Արշակյանը** եւ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար **Ռոբերտ Խաչատրյանը:**

Կոնֆերանսը մեկ հարթակում միավորել է գիտական, կրթական եւ տեխնոլոգիական համայնքների, պետական հատվածի ներկայացուցիչներին՝ քննարկելու Հայաստանի գիտատեխնոլոգիական եւ նորարարական համակարգի զարգացման հեռանկարները, այդ ճանապարհի խոչընդոտները եւ դրանց լուծումները, ինչպես նաեւ հասկանալու, թե ինչպես գիտությունը դարձնել առաջնային գործիք ՀՀ անվտանգության ապահովման եւ մրցունակության բարձրացման համար:

շարունակությունը՝ էջ 2

Թուրինյան գործընթաց

Դեպի ցկյանս ուսումնառություն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը** մասնակցել է *«Թուրինյան գործընթաց. դեպի ցկյանս ուսումնառություն. ազգային լուսավորչական հանդիպում»* խորագրով աշխատաժողովին:

Հայաստանը Թուրինյան գործընթացի նոր փուլի ակտիվ մասնակից է, որը նախաձեռնել է Եվրոպական կրթական հիմնադրամը (ԵԿՀ): Գործընթացի նպատակն է մշտադիտարկել ցկյանս ուսումնառության հեռանկարները եւ բարեփոխել դրա հայեցակարգը: Աշխատաժողովի առանցքում էր Հայաստանում ցկյանս ուսումնառության հայեցակարգի հիմնական բաղադրիչների քննարկումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՄԿՈՒ հասանելիության եւ գրավչության վրա:

շարունակությունը՝ էջ 4

Տեսչական

Ռեսուրսը պետք է օգտագործել ավելի արդյունավետ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանի** նախագահությամբ տեղի է ունեցել ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստը:

Նիստին ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը:**

Նիստի օրակարգում Կրթության տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության եւ ստուգումների տարեկան ծրագրերի ներկայացումն էր:

Կրթության տեսչական մարմնի ղեկավար **Վաղարշակ Մատիկյանը** ներկայացրել է 2024 թվականին նախատեսվող աշխատանքները՝ նշելով, որ նախատեսվում է իրականացվել 130 ստուգում, որից 6-ը՝ նախադպրոցական, 112-ը՝ հանրակրթական, 12-ը՝ նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Այս ուսումնական հաստատություններից 111-ում ստուգումներ իրականացվելու են առաջին անգամ: Ըստ Մատիկյանի՝ ստուգումների ծրագիրը կազմվել է ռիսկերի մեթոդաբանության հիման վրա:

շարունակությունը՝ էջ 3

Մայր աթոռ

Վեհափառն ընդունեց Հայորդյաց տների 2023 թ. մրցանակակիր սաներին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վաղարշապատի *«Հրաչ եւ Սյուզան Թուֆայան»* հայորդյաց տանը հյուրընկալեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հովանու ներքո գործող Հայորդյաց տների հանրապետական ու միջազգային տարբեր փառատոներում, մրցույթներում, ցուցահանդեսներում եւ մրցաշարերում պատվավոր տեղեր զբաղեցրած շուրջ 280 սաների:

Հայորդյաց տների ծրագիրը մեկնարկել է 1993 թվականին նախաձեռնությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **Տեր Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի** եւ աջակցությամբ ՀԲԸՄ նախագահ տիկին **Լուիզ Մանուկյան Սիմոնի:** Արտադպրոցական կրթության այս կենտրոններում տարբեր տարիքի երեխաները հնարավորություն են ստանում մասնակցելու արվեստների ու արհեստների, սպորտաձեւերի եւ այլ մասնագիտական խմբակներին՝ ստանալով հիմնավոր կրթություն: Մասնավոր ուշադրություն է դարձվում սաների հոգեւոր դաստիարակությանը եւ ազգային նկարագրի կերտմանը:

Հաջողություններ արձանագրած աշակերտները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին էին այցելել ստանալու Նորին Սրբության օրհնությունը:

Հանդիպումը սկսվեց Հայորդյաց տների տնօրենի պաշտոնակատար տիկին **Լիանա Առաքելյանի** ողջույնի խոսքով: Վերջինս Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Հայորդյաց տների արձանագրած հաջողությունները՝ մասնավորապես անդրադառնալով տարբեր ոլորտներում սաների նվաճումներին: Լիանա Առաքելյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Հայորդյաց տների նկատմամբ դրսեւորվող հայրական խնամքի ու հոգածության համար եւ ընդգծեց, որ կրթական այդ կենտրոնները՝ հաղթահարելով տարբեր դժվարություններ շարունակում են պատվով իրականացնել իրենց առաքելությունը հայրենական կյանքում:

Վեհապառն իր օրհնությունը եւ շնորհավորանքները փոխանցեց Հայորդյաց տների սաներին, մանկավարժներին ու տնօրեններին արձանագրված ձեռքբերումների եւ հաղթանակների առիթով: Նորին Սրբությունը, անդրադառնալով Հայորդյաց տների կարեւոր առաքելությանը, հաստատեց, որ Հայորդյաց տներում ոչ միայն բացահայտվում ու զորանում են հայորդիների տաղանդներն ու շնորհները, այլ նաեւ կերտվում է նրանց նկարագիրը՝ խարսխված ազգային եւ հոգեւոր արժեքների վրա: *«Մեր ցանկությունն է, որ մեր զավակները մեծանան Աստծու խնամքի եւ սիրո ներքո, հաղորդ դառնան Տիրոջ պատվիրաններին ու պատգամներին, ապրեն այդ պատվիրանների համաձայն՝ դրանք կենսագործելով իրենց կյանքում, որպեսզի մեր ժողովրդի զավակների կյանքը լինի երջանիկ եւ օրհնյալ, ազգը՝ հզոր, կարող եւ միշտ առաջադեմ, ժամանակի ոգուն ու ընթացքներին համարժեք քայլող»,-* ասաց Հայոց Հովվապետը՝ գոհունակությամբ ընդգծելով, որ Հայորդյաց տները 30 տարի շարունակ իրագործում են այդ սրբազան առաքելությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթքով վերհիշեց Հայորդյաց տների հիմնադրման ակունքներում կանգնած ՀԲԸՄ նախագահ լուսահոգի տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնին, ում հովանավորությամբ կյանքի կոչվեց ծրագիրը:

Հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետն իր բարձր գնահատանքը հայտնեց Հայորդյաց տների տնօրենի պաշտոնակատար տիկին Լիաննա Առաքելյանին, տնօրեն կազմին, մանկավարժներին՝ նախաձախնդիր եւ ժրաջան աշխատանքի համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարեմաղթեց, որ Աստծո օրհնության ներքո սաները հասակ առնեն, զորանան եւ իրենց ներդրումը բերեն բարօր ու հզոր Հայրենիքի կերտման գործում:

Ոլորտը՝ պետության առաջնահերթություն

սկիզբը՝ էջ 1

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է նախաձեռնությունը եւ ընդգծել դրա կարեւորությունը՝ ոլորտում առկա խնդիրների եւ դրանց լուծումների վերաբերյալ քննարկումները մասնակցային ու ներառական միջավայրում ապահովելու, տարբեր կարծիքներ հնչեցնելու տեսանկյունից: Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է գիտության ոլորտի առաջնահերթություններին. *«Կառավարությունը հստակ ու չափելի թիրախներ է սահմանել՝ գիտության ֆինանսավորման, գիտության ոլորտի երիտասարդացման, սերնդափոխության, նոր գիտնականների ներգրավման, արդյունքների հաստատման եւ տեխնոլոգիական առաջընթացին նպաստելու առումով: Վերջին 3 տարիներին Կառավարությունը գիտության ոլորտում կատարել է էական ներդրումներ, եւ կարիք կա հասկանալու այդ ներդրումների արդյունավետության, միջանկյալ արդյունքների եւ դրանց չափելիության ցուցանիշները, որպեսզի մեր հաջորդ քայլերը լինեն առավել մտածված եւ արդյունքների տեսանկյունից՝ ավելի հաշվետվողական: Պետք է հասկանալ նաեւ հասարակության, տնտեսության եւ գիտական համայնքի ակնկալիքները գիտության ոլորտից: Մեր խնդիրն է՝ զարգացնել նաեւ կապը գիտության արդյունքների եւ տնտեսության միջեւ»:*

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծել է՝ գիտության ոլորտի ֆինանսավորումը 2018 թվականի համեմատ արդեն իսկ ավելացել է 2,5 անգամ՝ ավելի քան 150 %-ով, եւ հասել ավելի քան 30 մլրդ-ի, որը բերում է տեսանելի փոփոխություններ:

«Նախորդ տարի գրանցել ենք գիտնականների թվի աճ. մեր դրամաշնորհային ծրագրերի մեծ մասը՝ ավելի քան 70%-ը, բաժին է հասնում մինչեւ 35 տարեկան երիտասարդ գիտնականներին: 2024 թվականի հունվարից գիտնականների աշխատավարձերի շուրջ 170 տոկոս աճ կունենանք: Այս գործընթացներին նպաստում է նաեւ տեխնիկական հագեցվածության ապահովումը: Միայն նախորդ տարի 28 գիտական սարքավորումներ են գնվել՝ շուրջ 2,9 մլրդ դրամ արժողությամբ: Կան նույնիսկ 1 մլն դոլար արժողությամբ սարքեր, որոնք թույլ են տալիս լուրջ եւ արդիական հետազոտություններ իրականացնել: Այս տարի արդեն 4,2 մլրդ-ի շրջանակում սարքավորումների գնման հայտեր են հավաքագրվել, եւ կազմակերպվում են գնման գործընթացները»,- փաստել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ հասարակական գիտությունների կարեւորությանը. *«ԿԳՄՍ նախարարությունը գիտության զարգացման առաջնահերթություն է դիտարկում ոչ միայն բնագիտամաթեմատիկական գիտությունները, այլեւ հասարակագիտությունը: Մենք ապրում ենք շատ բարդ ժամանակներում եւ ականատես լինում մեզ ծանոթ աշխարհակարգի ամբողջական վերափոխմանը, որտեղ հասարակագիտությունը մեծ անելիք ունի»:*

Աժ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը կոնֆերանսի մասնակիցներին տեղեկացրել է, որ 2024 թ. բյուջետային հայտում առաջարկվել է Հայաստանում սուպերհամակարգչային արհեստական բանականության կենտրոն ստեղծել՝ 8 մլն դոլար արժողությամբ: Հարցն առաջիկայում կքննարկվի Կառավարության նիստում:

ԲՏԱ նախարար Ռոբերտ Խաչատրյանն անդրադարձել է աշխատաշուկայի պահանջարկի հիման վրա մասնագետների պատրաստման խնդրին. *«Առաջարկվող բոլոր գաղափարները փորձում ենք կյանքի կոչել շարունակական եւ նոր ծրագրերի շնորհիվ՝ ապահովելով ինչպես կրթական, այնպես էլ գիտական բաղադրիչները: Դրանք միտված է գիտության, կրթության, բարձր տեխնոլոգիաների եւ տնտեսության զարգացմանը»:*

«ԱՅԲ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ **Արամ Փախչանյանն** իր հերթին ընդգծել է. *«Գիտությունն այլեւս անհատների գործ չէ, այն համակարգված եւ կազմակերպված ընթացք է: Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք ոչ միայն հասարակական, այլեւ տեխնոլոգիական են: Մարդկությունը միշտ կարողացել է գտնել բարդ իրականությունից ելք, որը եղել է նաեւ ռիսկի ճանապարհ, իսկ այդ ճանապարհի առաջամարտիկները գիտնականներն են»:*

Կոնֆերանսի ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր՝ ուղղված համալսարաններում եւ ինստիտուտներում առկա գիտական ներուժին եւ ապագայի պահանջներին, հետազոտահեն կրթական միջավայր ստեղծելու անհրաժեշտությանը, Հայաստանում հումանիտար եւ հասարակագիտական գիտությունների առաջխաղացմանը, գիտության առեւտրայնացմանը:

Կոնֆերանսն անցկացվել է գիտության ոլորտի վերաբերյալ 8 պանելային քննարկումների միջոցով: Ամփոփվել են նաեւ *«Գիտուժ»* նախաձեռնության անցած ճանապարհը, ձեռքբերումները եւ հետագա անելիքները:

Աշխարհի հետ

Առկա են հիանալի նախադրյալներ

Նախարար **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է կրթական ու մշակութային հարցերով ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ **Ռաֆիկ Մանսուրին:**

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը,** ՀՀ-ում ԱՄՆ դեսպան **Քրիստինա Քվինը:**

Ժաննա Անդրեասյանը ողջունել է հյուրերին եւ ընդգծել հայ-ամերիկյան փոխգործակցության կարեւորությունը. *«Տարբեր ուղղություններով ունենք արդյունավետ համագործակցություն, առկա են նաեւ նոր ծրագրեր. սա ցույց է տալիս մեր գործընկերության որակն ու այն ներուժը, որը կարելի է օգտագործել»:*

Առանձնացնելով մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ արդյունավետ համագործակցությունը՝ նախարարն անդրադարձել է Շիրակի մարզի Երերույքի բազիլիկ տաճարի պահպանության ու վերականգնման նպատակով ԿԳՄՍ նախարարության եւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան միջեւ հուշաթերթի ստորագրմանը: Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նմանօրինակ նախաձեռնություններն ու շնորհակալություն հայտնել այդ ուղղությամբ շարունակական աշխատանքի եւ համագործակցության համար:

«Այս օրերին դա մեզ համար հատկապես կարեւոր է՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության պահպանության հարցը: Կարծում ենք՝ այս առումով միջազգային գործիքակազմի եւ ջանքերի լրջագույն կարիք կա: Ընդ որում՝ խնդիրը վերաբերում է թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական մշակութային ժառանգությանը: Նյութական մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ ամենակարեւոր քայլը կլինի տարածաշրջանային միջազգային փաստահավաք առաքելություն ուղարկելը, որը կկարողանա տեղում արձանագրել հուշարձանների հետ կապված իրավիճակը»,- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ ընդգծելով, որ խնդիրն ավելի է սրվել 2023 թվականի սեպտեմբերի 19-ի իրադարձություններից հետո, երբ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանումից հետո ԼՂ-ում վտանգված են 5000-ից ավելի հուշարձաններ եւ 20-ից ավելի թանգարաններ:

Ըստ նախարարի՝ 2020թ.-ից ի վեր չի հաջողվում ԼՂ ուղարկել միջազգային փաստահավաք առաքելություն, որը կարողանար փաստագրել մշակութային ժառանգության հետ կապված իրավիճակը: Ժաննա Անդրեասյանն արձանագրել է՝ խնդրի միջազգային տեսանելիությունն ու իրազեկվածությունը բարձրացնելու անհրաժեշտություն կա:

ԿԳՄՍ նախարարն ընդգծել է՝ ոչ նյութական հարուստ մշակութային ժառանգության պահպանության հարցը եւս լրջագույն խնդիր է առաջացնում, քանի որ ԼՂ-ից բռնի տեղահանված քաղաքացիներն այժմ բնակություն են հաստատել ՀՀ տարբեր մարզերում:

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ կրթության ոլորտում երկկողմ համագործակցությանը՝ նշելով, որ առկա են հաջողված ծրագրեր, իսկ արդյունքներն առավել, քան տեսանելի են: ԿԳՄՍ նախարարը կարեւորել է ԱՄՆ կառավարության կողմից ֆինանսավորվող կրթական փոխանակման ծրագրերում ԱՄՆ եւ ՀՀ քաղաքացիների մասնակցությունը. *«Նախորդ շաբաթ նշեցինք փոխանակման հաջող ծրագրերից մեկի՝ FLEX-ի 30-ամյակը, որն ավելի քան 1000 մասնակիցների կյանքում ունեցել է կարեւոր որակական ազդեցություն: Կարեւորում եմ նաեւ ներառական կրթության մասով մեր համագործակցությունը, որտեղ շատ կարեւոր արդյունքներ ունենք: Կարծում եմ՝ առկա են հիանալի նախադրյալներ այս բոլոր ուղղություններով մեր աշխատանքները շարունակելու համար»:*

շարունակությունը՝ էջ 4

Ռեսուրսը պետք է օգտագործել ավելի արդյունավետ

սկիզբը՝ էջ 1

Նախարար Ժաննա Անդրեասյանը հետաքրքրվել է՝ արդյոք ստուգումների ռիսկայնության գնահատման համար սահմանված չափանիշները բխում են հանրակրթության խնդիրներից՝ առաջարկելով վերանայել օբյեկտիվ ցուցանիշները. *«Ռիսկայնությունը գնահատելու նպատակով պետք է իրավիճակն ամբողջությամբ պատկերացնել, ինչը ենթադրում է մեթոդաբանության վերանայում: ԿԳՄՍ նախարարությունը եւս բազմաթիվ բողոքներ է ստանում տարբեր ուսումնական հաստատություններից: Պետք է կազմվի նախարարությանը եւ տեսչական մարմնին ուղղված բողոքների եւ տեղեկատվության վիճակագրություն, համադրվի եւ ուղղվի տեսչական մարմնին՝ որպես խնդրի հասցեատիրոջ: Կարեւոր է գնահատումն անել ամբողջական տեղեկատվության հիման վրա, որպեսզի տեսչական մարմնի ռեսուրսն ավելի արդյունավետ օգտագործվի»:*

ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար Վաղարշակ Մատիկյանն անդրադարձել է նաեւ ուսումնական հաստատություններում կատարված խախտումներին, դրանց ուղղված աշխատանքներին, ընթացիկ տարվա ձեռքբերումներին եւ նախատեսվող աշխատանքներին: Մասնավորապես նշվել է, որ 2023 թվականին պլանավորված վերահսկողական, ինչպես նաեւ կանխարգելիչ եւ իրազեկման աշխատանքներն ամբողջությամբ իրականացվել են՝ ներառելով ծնողներին, մանկավարժներին եւ ՏԻՄ աշխատակիցներին: 16 դպրոցում հաջողությամբ իրականացվել է տեսչական մարմնի պատվիրակած՝ *«Աջակցություն ուսուցման կազմակերպությանը»* ծրագիրը, մշակվել են ՀՀ կրթության բնագավառի պետական վերահսկողության հայեցակարգ, նախադպրոցական ուսումնական հաստատության ներքին գնահատման ձեւաթուղթ, մեկնարկել են տվյալների թվայնացման աշխատանքները եւ այլն:

Նիստի ընթացքում ներկայացվել են նաեւ 2024 թվականի նոր նախաձեռնությունները. կամբողջացվի ռիսկերի գնահատման թվայնացման գործիքակազմը, որը կնպաստի նաեւ վերահսկողական գործառույթների արդյունավետության բարձրացմանը: Նախատեսվում է քոլեջներում *«Աջակցություն ուսուցման կազմակերպությանը»* ծրագրի հայեցակարգի մշակում եւ իրականացում՝ *«Չեռներեցություն»,* այնուհետ *«Հաղորդակցություն»* առարկաների համար:

Նիստի ընթացքում հաստատվել են Կրթության տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության եւ ստուգումների տարեկան ծրագրերը:

Կառավարություն

Հաստատվել է դպրոցի տնօրենի նշանակման նոր կարգը

ՀՀ կառավարությունը հաստատել է պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության, տնօրենի նշանակման եւ բողոքարկման նոր կարգը:

Հանրակրթության ոլորտում հաստատությունների ղեկավարման համակարգում կարեւոր է ունենալ դպրոցի բովանդակային կառավարման քաղաքականության ամբողջական շղթա՝ տնօրենների ընտրության եւ նշանակման գործընթացից մինչեւ հետագա գործունեության մշտադիտարկում, վերահսկում, խթանում եւ զարգացում: Այս խնդիրների կարգավորման համար կառավարման նոր համակարգով պլանավորվել է դպրոցի տնօրենների ընտրության եւ նշանակման եռափուլ համակարգ, ինչպես նաեւ հետագայում տնօրենների գործունեության ամենամյա մոնիթորինգի եւ ատեստավորման համակարգ: Ամբողջությամբ վերանայվել է տնօրենի պաշտոնի նկարագիրը. տնօրենի պաշտոնը դասվել է մանկավարժական պաշտոնների շարքին՝ ընդգծելու բովանդակային կառավարման եւ բովանդակության հետ ունեցող կապը: Ավելին՝ մշակվել եւ ներդրման գործընթացում է կրթության որակի ներդպրոցական վերահսկողության գործիքակազմ, որտեղ դպրոցի տնօրենն ունի առանցքային նշանակություն՝ որպես կրթության գործընթացի առաջնորդ:

Տնօրենի նշանակման գործող կարգով՝ տնօրենի հավակնորդները ներկայացնում են դպրոցի զարգացման ծրագիր, որն անցնում է փորձաքննություն՝ մրցույթով ընտրված կազմակերպության կողմից: Դրական շեմը հաղթահարած ծրագրերի հեղինակ հավակնորդները մասնակցում էին հարցազրույցի լիազոր մարմնի շրջանակում, որի արդյունքներով էլ տեղի է ունենում նշանակումը: Կարգի կիրարկման ընթացքում պարզվել է՝ առկա են դեպքեր, երբ զարգացման ծրագրերը չեն բավարարում նվազագույն պահանջներին, եւ բացահայտվում են ինքնուրույն աշխատանքի ամբողջական կամ մասնակի բացակայության հիմքեր:

Այս խնդիրների կարգավորման եւ գործընթացի օբյեկտիվության ապահովման նպատակով նոր կարգով առաջարկվել են մի քանի մեխանիզմներ:

Մեխանիզմներից առաջինը արտագրության փաստի արձանագրման վերաբերյալ դրույթների ներառումն է կարգում, որով նախատեսվում է՝ մինչեւ ծրագիրը փորձաքննության ուղարկելը, նախեւառաջ պետք է ստուգել դրանում արտագրության փաստերն ու ծավալը՝ օգտագործելով էլեկտրոնային համապատասխան ծրագրերը եւ զարգացման ծրագրերի բազան: Այս մեխանիզմը գործարկվելու է 2024 թվականի հունվարի 1-ից:

Ըստ այդմ՝ ավելացվել են համապատասխան դրույթներ՝ զարգացման ծրագրի ինքնուրույն մշակված լինելու փաստը ստուգելու մեխանիզմի ներդրման վերաբերյալ, որի արդյունքում արտագրված ծրագրերն ուղղակի չեն ուղարկվի փորձաքննության:

Երկրորդ գործիքը հավակնորդի հետ հարցազրույցի անցկացումն է մասնագիտական հանձնաժողովի կողմից, որը հնարավորություն կտա դիտարկելու, թե որքանով է տվյալ ծրագիրը ներկայացրած անձն իրականում տիրապետում դպրոցի խնդիրներին, այն կարողունակություններին եւ անձնային որակներին, որոնք անհրաժեշտ են արդյունավետ կառավարման համար: Մասնագիտական հանձնաժողովում կընդգրկվեն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ համապատասխան լիազոր մարմինների ներկայացուցիչներ:

Երրորդ գործիքը բողոքարկման գործընթացն է. հստակ նկարագրվել են բողոքարկման հանձնաժողովի ձեւավորման եւ բողոքարկման գործընթացի ժամկետները, սկզբունքներն ու քայլերը:

Այսպիսով՝ կամբողջացվի տնօրենի նշանակման եռափուլ համակարգը, որը բաղկացած է հավաստագրման համակարգից, զարգացման ծրագրերի փորձաքննությունից եւ հարցազրույցից: Ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդ փուլ հնարավոր է անցնել միայն նախորդը հաղթահարելու պարագայում:

Առկա են հիանալի նախադրյալներ

սկիզբը՝ էջ 3

Կրթական ու մշակութային հարցերով ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Ռաֆիկ Մանսուրը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ փաստել՝ մեր երկիր իր վերջին այցից հետո մի շարք փոփոխություններ եւ դրական միտումներ է նկատում:

«Ուրախ եմ, որ մեր երկրների միջեւ համագործակցությունն էականորեն ընդլայնվել է: Այդուհանդերձ, դրանց զարգացման համար առկա է շատ ավելի մեծ ներուժ»,- ասել է Ռաֆիկ Մանսուրն ու կարեւորել համատեղ իրականացվող կրթական ու մշակութային մի շարք ծրագրեր:

Կրթական ու մշակութային հարցերով ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալն ընդգծել է՝ օրերս ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունը հայտարարել է հայ լրագրողների համար նախատեսված նոր փոխանակման ծրագրի մեկնարկի մասին: Նրա խոսքով՝ *«Լրագրողների մասնագիտական փոխգործակցության հայ-ամերիկյան ծրագրի»* շրջանակում հայաստանյան 54 լրագրողներ հնարավորություն կունենան այցելելու Միացյալ Նահանգներ՝ մասնակցելու ուսումնական ծրագրերի, որոնք ոչ միայն կբարելավեն ապատեղեկատվության վերհանման, լրագրողական հրապարակումներ պատրաստելու նրանց հմտությունները:

ԿԳՄՍ նախարարը կարեւորել է նմանօրինակ նախաձեռնությունները՝ ընդգծելով՝ հանրակրթության պետական նոր չափորոշչով առանձնակի ընդգծվում է մեդիագրագիտության դերը, եւ սա վստահաբար կնպաստի որակյալ մեդիադաշտի եւ մասնագիտական կրթության ապահովմանը:

Կրթական ու մշակութային հարցերով ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Ռաֆիկ Մանսուրը կարեւորել է նաեւ Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ ջանքերի համատեղումը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր՝ պատրաստակամություն հայտնելով շարունակելու համատեղ ծրագրային նախաձեռնությունները՝ ի նպաստ երկու երկրների ու ժողովուրդների միջեւ հարաբերությունների առավել ամրապնդմանն ու խորացմանը:

Դեպի ցկյանս ուսումնառություն

սկիզբը՝ էջ 1

Աշխատաժողովին ներկա են եղել նաեւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ **Ռուբեն Սարգսյանը,** ԿԳՄՍՆ նախնական եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետ, Թուրինյան գործընթացի ազգային համակարգող **Արմենուհի Պողոսյանը,** Հայաստանում ԵՄ պատվիրակության անդամ, մարդկային կապիտալի զարգացման ավագ մասնագետ **Ֆրանկ Հեսը,** Եվրոպական կրթական հիմնադրամի մասնագետներ եւ այլք: Նիստը վարել է ԵԿՀ մարդկային կապիտալի զարգացման ավագ մասնագետ, Հայաստանի հետ կապերի պատասխանատու **Կրիստիանա Բուրցիոն:**

Բարձր գնահատելով ԵՄ-ի հետ տարբեր ոլորտներում համագործակցությունը՝ ԿԳՄՍ փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը նշել է՝ Եվրոպական միությունը 2007 թվականից սերտորեն համագործակցում է ԿԳՄՍ նախարարության հետ եւ հանդիսանում ՄԿՈՒ ոլորտում կարեւոր դերակատարներից ու աջակիցներից մեկը:

«ԵՄ-ի աջակցության շրջանակում հարկ է ընդգծել Եվրոպական կրթական հիմնադրամի դերը, որը երկար տարիներ ընդգրկված է եղել Հայաստանի ՄԿՈՒ համակարգի բարեփոխումներում՝ տվյալների եւ տեղեկությունների հավաքագրման, զարգացման, գերակայությունների որոշարկման գործում խորհրդատվության տրամադրման եւ կարողությունների զարգացման միջոցով»,- ասել է Արթուր Մարտիրոսյանը:

Փոխնախարարի խոսքով՝ ԵԿՀ-ի կարեւորագույն քայլերից է 2010 թվականից առ այսօր *«Թուրինի գործընթաց»* նախագծի ձեռնարկումը: *«Մեծ է Թուրինի գործընթացի նշանակությունը Հայաստանում մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտում բարեփոխումների հակիրճ, փաստագրված վերլուծության, այդ թվում՝ քաղաքականության առանցքային ուղղությունների, մարտահրավերների, սահմանափակումների, ինչպես նաեւ լավագույն փորձի ու հնարավորությունների որոշարկման հարցում»,*- ավելացրել է Մարտիրոսյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալի բնորոշմամբ՝ Թուրինյան գործընթացն առաջնորդող ուղեցույց է, որը որոշում է մեր երկրում մասնագիտական կրթության եւ ուսուցման բարեփոխումների գործընթացի վեկտորը:

Արթուր Մարտիրոսյանը ներկաներին նաեւ տեղեկացրել է, որ *«ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրում»* ՄԿՈՒ ոլորտի վերաբերյալ արտացոլված հիմնական ուղենիշներն ամբողջովին արտահայտում են Թուրինյան գործընթացի տրամաբանությունը:

ԵՄ պատվիրակության անդամ Ֆրանկ Հեսը, անդրադառնալով ցկյանս ուսումնառության հայեցակարգին, կարեւորել է դասավանդման մոտեցումները փոխելու անհրաժեշտությունը: *«Շատ կարեւոր է այն, ինչ անում է ԵԿՀ-ն. նրանք շեշտը դնում են ապացուցահեն կրթության վրա: Մենք պետք է վերացնենք այն խոչընդոտները, որ կան ՄԿՈՒ ոլորտում, եւ Հայաստանն ակտիվ մասնակից է այս գործընթացում»,*- ասել է Ֆրանկ Հեսը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, կարեւորելով Հայաստանի մասնակցությունը Թուրինյան գործընթացին, շեշտել է, որ ԱՍՀ եւ ԿԳՄՍ նախարարություններն ընդհանուր խնդիր ունեն աշխատաշուկայում մի դեպքում՝ աշխատանքի, մյուս դեպքում՝ կրթության տեսանկյունից: *«Այս համագործակցությունը կապահովի կրթություն-աշխատաշուկա կապը: Խոսքը բավականին արդիական ոլորտի՝ ՄԿՈՒ-ի մասին է: Վստահ եմ՝ աշխատանքներն արդյունավետ կլինեն, եւ դա կչափվի մոտակա 5 տարիների արդյունքներով, երբ մենք այլեւս չենք քննարկի աշխատաշուկայի եւ կրթության միջեւ կապի որակի հարցերը, այլ կունենանք հստակ գործող մեխանիզմ»,*- հույս է հայտնել ԱՍՀ նախարարի տեղակալը:

ԿԳՄՍՆ նախնական եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արմենուհի Պողոսյանի խոսքով՝ Թուրինյան գործընթացն այն լավագույն գործիքն է, որը հնարավորություն է տալիս խզելու աշխատաշուկայի եւ կրթության միջեւ շեղումը: *«Հայաստանում այժմ բավականին լուրջ բարեփոխումների փուլում ենք: Կառավարությունն արդեն ընդունել է «Մասնագիտական կրթության եւ ուսուցման» եւ հարակից օրենքների փաթեթն Ազգային ժողով ներկայացնելու որոշումը: Այս օրենքն արմատական փոփոխություններ է նախատեսում ոլորտում, որոնք մեզ թույլ են տալու աշխատաշուկան ապահովել որակյալ մասնագետներով եւ նպաստել տնտեսության զարգացմանը»,*- ասել է Արմենուհի Պողոսյանը: Լինելով Թուրինյան գործընթացի ազգային համակարգողը՝ Արմենուհի Պողոսյանը ներկաներին նաեւ տեղեկացրել է աշխատաժողովի՝ Հայաստանում կազմակերպման մանրամասները:

Աշխատաժողովի հետագա ընթացքում ԵԿՀ փորձագետ **Աբդելազիզ Ջոհանին** ներկաներին շնորհանդեսի տեսքով ցուցադրել է Հայաստանում ՄԿՈՒ ոլորտի մշտադիտարկման արդյունքներն ու ստացված ցուցանիշները եւ ամփոփ ներկայացրել է Թուրինյան գործընթացի հայեցակարգը:

Շնորհանդեսին հաջորդել են աշխատանքային խմբերով քննարկումներն ու տարբեր առաջարկների ներկայացումները եւ դիտարկումները:

Աշխարհի հետ

Քննարկվել են համագործակցության հնարավոր ուղղությունները

Նախարար **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է Եվրոպական ներդրումային բանկի ԵՄ հարեւան երկրներում վարկային գործառնությունների հարցերով տնօրեն **Լիոնել Ռապայի** գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը:**

Ժաննա Անդրեասյանը ողջունել է հյուրերին՝ կարեւորելով թե՛ ներկայում քննարկվող ծրագիրը մասնագիտական կրթության ու ուսուցման ոլորտում, թե՛ հնարավոր համագործակցության՝ բավականին մեծ օրակարգը: Նախարարն առանձնահատուկ ընդգծել Եվրոպական ներդրումային բանկի կողմից Սյունիքի մարզում իրականացվող համապարփակ աշխատանքը:

Եվրոպական ներդրումային բանկի հետ համագործակցության շրջանակում դիտարկվում է Սյունիքի մարզի նախնական եւ միջին մասնագիտական հաստատությունների վերանորոգման, արդիականացման եւ վերազինման աշխատանքների իրականացումը:

Նախարարի խոսքով՝ սա մի ամբողջական մոտեցում է՝ ուղղված Սյունիքի մարզի դիմակայունության բարձրացմանն ու բոլոր համակարգերի որակական փոփոխությանը. *«Այդ շարքում կրթությունն ունի առանձնահատուկ նշանակություն: Կարեւորում եմ, որ մեր համատեղ ծրագրի շրջանակում կարողանանք ընդլայնել մասնագիտական որակյալ կրթության հնարավորությունները Սյունիքի մարզի համար: Այս համատեքստում հատկանշական է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության՝ GIZ-ի հետ համագործակցությունը, որը մասնագիտական կրթության ոլորտում մեր հուսալի եւ շարունակական գործընկերներից մեկն է»:*

Անդրադառնալով համագործակցության մյուս հեռանկարներին՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն առաջարկել է դիտարկել *«ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրի»* շրջանակում համատեղ նախագծերի հնարավորությունները:

ԿԳՄՍ նախարարն անդրադարձել է դպրոցների եւ մանկապարտեզների մեծածավալ շինարարության՝ *«300 դպրոց, 500 մանկապարտեզ»* ծրագրին: Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է՝ ՀՀ կառավարության նիստում հաստատվել է այդ դպրոցների ցանկը, ու թեեւ աշխատանքները տեւական ժամանակ է, ինչ մեծ թափով ընթանում են, դեռեւս շատ անելիքներ կան:

Հաջորդ ուղղությունը, որի շրջանակում Ժաննա Անդրեասյանն առաջարկել է դիտարկել համագործակցության հնարավորությունը, վերաբերել է բարձրագույն կրթությանը եւ գիտությանը:

«Եվրոպական ներդրումային բանկն ունի մեծ փորձառություն նաեւ բուհական եւ հետազոտական համակարգերի բարելավմանն ուղղված ծրագրերում: Այս ուղղությամբ եւս մեծածավալ ծրագիր ենք իրականացնում, որը կապված է՝ բուհերի եւ գիտական կազմակերպությունների համար նոր ենթակառուցվածք եւ միջավայր ձեւավորելու հետ: Խոսքն «Ակադեմիական քաղաք» ծրագրի մասին է: Նախատեսում ենք շուրջ 700 հա տարածության վրա կառուցել անհրաժեշտ ենթակառուցվածքներ մինչեւ 16 բուհերի համար, որտեղ լինելու են նաեւ գիտահետազոտական կենտրոններ»,- ասել է ԿԳՄՍ նախարարը՝ առաջարկելով դիտարկել համատեղ աշխատանքների հնարավորությունը նաեւ այս ուղղությամբ:

Եվրոպական ներդրումային բանկի ԵՄ հարեւան երկրներում վարկային գործառնությունների հարցերով տնօրեն Լիոնել Ռապան շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ նշել՝ ԵՄ-Հայաստան երկխոսության համատեքստում կրթության ոլորտն առաջնայիններից է.

«Կրթության բոլոր մակարդակները մեր բանկի ներդրումային գործունեության հիմնական ուղղվածություններից են: Կրթության ոլորտին մենք իսկապես մեծ ուշադրություն ենք դարձնում եւ տրամադրում ոչ միայն ֆինանսական, այլեւ փորձագիտական աջակցություն»,- ասել է Լիոնել Ռապան եւ պատրաստակամություն հայտնել դիտարկելու թե՛ լրացուցիչ ու շարունակական կրթության, թե՛ դպրոցաշինության եւ թե բարձրագույն կրթության ու գիտության ոլորտում համագործակցության հնարավորությունները:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւս:

Կառավարություն

Կփոխհատուցվի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձը

ՀՀ կառավարության նիստում գործադիրը հավանության է արժանացրել 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ԼՂ նախնական, միջին եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա եւ հեռակա ուսուցման համակարգի այն ուսանողների 2023-2024 ուստարվա 1 կիսամյակի ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման մասին որոշումը, որոնք սահմանված կարգով տեղափոխվել են ՀՀ պետական ուսումնական հաստատություններ:

Հարցը զեկուցել է ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը**՝ նշելով, որ Կառավարության հոկտեմբերի 12-ի որոշմամբ մեկնարկել է կրթաթոշակի տրամադրման ծրագիրը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ քոլեջների եւ բուհերի այն ուսանողների համար, որոնք այս պահին կրթության շարունակականության խնդիր ունեն: *«Նախարարությունն իրականացրել է ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից հավաքագրման աշխատանքներ. նույնականացվել են 1836 ուսանողների տվյալներ (1728՝ բակալավրի, 108՝ մագիստրոսական կրթական ծրագրով), որոնց 2023-2024 ուստարվա 1 կիսամյակի ուսման վարձի փոխհատուցման գումարի չափը կազմում է շուրջ 440 մլն դրամ: Նախնական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների՝ ԼՂ-ից բռնի տեղահանված սովորողների թիվը կազմում է 2524 ուսանող, որոնց 2023-2024 ուստարվա 1 կիսամյակի ուսման վարձի փոխհատուցման գումարի չափը կազմում է շուրջ 402 մլն դրամ: Այսինքն՝ այս որոշմամբ լուծում ենք ֆինանսավորման խնդիրը եւ հատկացնում համապատասխան գումարները. կրթության կազմակերպման իմաստով գործընթացը մեկնարկել էր ավելի վաղ»,*- նշել է նախարարը:

Նախարարը շեշտել է, որ եթե կլինեն այլ ուսանողներ, որոնք մինչ այս պահը ընդգրկված չեն կրթության գործընթացում, եւ հավելյալ տվյալներ ի հայտ կգան, ապա լրացուցիչ որոշում կկայացվի նաեւ նրանց մասով:

Ժաննա Անդրեասյանը հիշեցրել է, որ ՀՀ կառավարությունը հոգում է նաեւ ԼՂ-ից բռնի տեղահանված դպրոցականների կրթության կազմակերպման ծախսերը. բոլոր դասագրքերը տրամադրվում են անվճար:

«Կրթության կազմակերպման մասով ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների համար հավելյալ ծախսերի կարիք չկա»,- ընդգծել է նախարարը:

Կամավոր

Դրույքաչափը՝ 200.000 դրամ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել են կամավոր ատեստավորման արդյունքում **60-69** տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչների/անձանց ցուցակները՝ սահմանելով դրույքաչափը **200.000 դրամ**՝ մեկ դրույք զբաղվածության համար:

Համաձայն հրամանի՝ ուսուցիչ չաշխատող անձինք դրույքաչափի փոփոխությունից կօգտվեն պետական հանրակրթական դպրոցներում որպես ուսուցիչ աշխատանքի ընդունվելու օրվանից:

Սահմանվել է նաեւ, որ դրույքաչափի փոփոխությունը կատարվում է՝ սկսած **2023 թվականի հոկտեմբերի 1-ից,** որը կիրառվելու է նաեւ 2021 եւ 2022 թվականներին կամավոր ատեստավորմանը մասնակցած եւ 60-69 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչների համար:

«Դպրոցականների գավաթ - 2023»

«Կարեւորն այն է, որ երեխաները ֆուտբոլ են խաղում»

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** Վազգեն Սարգսյանի անվան *«Հանրապետական»* մարզադաշտում ներկա է եղել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի 2023թ. *«Ֆուտբոլի դպրոցական գավաթ»* մրցաշարի Մ10, Մ12 եւ Մ14 տարեկանների եզրափակիչներին եւ պարգեւատրման արարողությանը: Նախարարը նաեւ հետեւել է Արմավիր-Սյունիք եւ Արմավիր-Շիրակ խաղերին:

ԿԳՄՍ նախարարին ուղեկցել եւ դպրոցականների շրջանում ֆուտբոլի տարածման ծրագրերի մասին պատմել է ՀՖՖ նախագահ **Արմեն Մելիքբեկյանը:**

Մրցաշարին ներկա են եղել նաեւ Արմավիրի, Շիրակի եւ Վայոց ձորի մարզպետները, ՀՖՖ փոխնախագահ **Արմեն Նիկողոսյանը,** ՀՖՖ նախագահի խորհրդական, լեգենդար ֆուտբոլիստ **Խորեն Հովհաննիսյանը:**

2023 թվականին մրցաշարը մասնակցության աննախադեպ ցուցանիշ է գրանցել. մասնակցել է 429 դպրոց, գրանցվել 760 թիմ, 8200 աշակերտ ներգրավված եղել ծրագրում: Այս ծրագրին մասնակցողները ՀՖՖ-ի պրոֆեսիոնալ մրցումներին չմասնակցող, պրոֆեսիոնալ ֆուտբոլով չզբաղվող աշակերտներ են:

Արմեն Մելիքբեկյանը ԿԳՄՍ նախարարին տեղեկացրել է, որ զգալի առաջընթաց է գրանցվել համայնքներում խաղադաշտերի կառուցումից հետո, եւ հետաքրքրությունը կտրուկ մեծացել է: Իր հերթին ԿԳՄՍ նախարարը նկատել է՝ կարեւորը հաղթանակը չէ, այլ այն փաստը, որ երեխաները ֆուտբոլ են խաղում: Նախարար Ժաննա Անդրեասյանը կարեւորել է, որ մարզերը եւ դպրոցները եւս նախաձեռնողականություն ցուցաբերեն ծրագրին ներգրավվելու հարցում:

Նախարարին ներկայացվել են ծրագրի շրջանակում ՀՖՖ-ի գործունեությունը եւ դրա իրականացման ընթացքում ծագող խնդիրները:

Մինչեւ 10 տարեկանների պայքարում եզրափակիչ են հասել Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 2 հիմնական եւ Տավուշի մարզի Կողբ գյուղի դպրոցների թիմերը: Մ12 տարեկանների եզրափակչում էին Սյունիքի մարզի Գորիսի թիվ 3 դպրոցն ու Արմավիրի մարզի Այգեվանի դպրոցի թիմը: Մ14 տարեկանների պայքարում եզրափակիչ հասել էին Շիրակի Սառնաղբյուր գյուղի եւ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 դպրոցների թիմերը:

Մ10 տարեկանների պայքարում հաղթող է դարձել Կողբի դպրոցի թիմը, Մ12 եւ Մ14-երի պայքարում՝ Արմավիրի մարզի թիմերը:

Նշենք, որ *«Ֆուտբոլի դպրոցականների գավաթ»* մրցաշարը կազմակերպվում է *«Ֆուտբոլը դպրոցներում»* կրթական ծրագրի շրջանակում: Ծրագիրը, որի նպատակն է դպրոցներում ֆուտբոլի ներդրումը, բաղկացած է երկու մասից. տարեսկզբին ՀՖՖ-ն կրթական ծրագրի շրջանակում կազմակերպում է ֆիզկուլտուրայի ուսուցիչների ՈՒԵՖԱ-ի չափանիշներին համապատասխան մարզչական դասընթաց, որից հետո ուսուցիչները *«Ֆիզկուլտուրա»* առարկայի շրջանակում կիրառում են ֆուտբոլային պարզ շարժախաղեր եւ այլն: Դպրոցները, որոնց ֆիզկուլտուրայի ուսուցիչները ներգրավվում են ծրագրին, ֆուտբոլային մարզագույք են ստանում ՀՖՖ-ի կողմից: Դասընթացի շրջանակում վերապատրաստվել է շուրջ 600 ուսուցիչ, ծրագրին մասնակցել մոտ 500 դպրոց: Ծրագրի ամփոփումը ֆուտբոլային թիմերի ձեւավորումն է դպրոցներում, որոնք էլ աշնանը մասնակցում են ՀՖՖ ֆուտբոլի դպրոցական գավաթի խաղարկությանը:

Տարկետում

Փոփոխություններ՝ կարգում

ՀՀ կառավարության որոշմամբ՝ փոփոխություն է կատարվել *«Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ եւ կարեվորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու կարգում»:*

Համաձայն հիմնավորման՝ նշված կարգով 2023 թվականի ամառային զորակոչից մի շարք քաղաքացիների արդեն իսկ տրամադրվել է տարկետում: Սակայն դրա կիրարկման ընթացքում ի հայտ է եկել կարգով չնախատեսված իրավիճակ՝ կապված քաղաքացիների տվյալների փոխանցման ժամկետների հետ: Ըստ այդմ՝ կարգով սահմանված ժամկետները համապատասխանեցվել են Հայաստանի Հանրապետության պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կարգով սահմանված ժամկետներին: Մասնավորապես՝ սահմանվել է, որ զինվորական հաշվառում անցած չլինելու կամ բուհերի համապատասխան մասնագիտությամբ ընդունվելու վերաբերյալ տեղեկատվությունը նախարարությանը չտրամադրվելու դեպքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու Կառավարության որոշման մեջ չներառված, սակայն տարկետման տրամադրման հիմքերի առկայության եւ դիմում ներկայացնելու դեպքում նախարարությունը մեկ ամսյա ժամկետում շրջանառում է Կառավարության առանձին որոշման նախագիծ:

Այսպիսով, որոշման ընդունմամբ, հնարավորություն է ընձեռվում կարգով սահմանված հիմքով տարկետման իրավունք ձեռք բերած, սակայն ամառային զորակոչից տարկետում չստացած քաղաքացիներին ՀՀ կառավարության առանձին որոշմամբ տրամադրել տարկետում:

Ժամանակակից մշակութային եւ երիտասարդական միջավայր

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանն** աշխատանքային այց է կատարել Արագածոտնի մարզի Թալին եւ Շիրակի մարզի Մարալիկ եւ Արթիկ համայնքներ՝ ծանոթանալու երիտասարդական, մշակութային կյանքին, առկա պայմաններին ու խնդիրներին:

Նախարարի տեղակալն այցի շրջանակում հանդիպել է նշյալ համայնքների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում տեղի են ունեցել նշյալ համայնքներում երիտասարդների ակտիվության, մշակութային ներուժի եւ դրա վերահմաստավորման, նոր մոտեցումներով մշակույթ-երիտասարդություն կապի զարգացման վերաբերյալ քննարկումներ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը հետաքրքրվել է համայնքներում գործող մշակութային հաստատությունների, երիտասարդական կառույցների, համայնքում մշակույթի դերի եւ ակտիվության մասին: Մատնանշվել են ԿԳՄՍՆ-համայնք համագործակցության հեռանկարները՝ մշակույթի եւ երիտասարդության ոլորտներում:

Անդրադառնալով մարզերում եւ համայնքներում մշակութային կյանքի զարգացմանը եւ երիտասարդներին դիտարկելով որպես դրան խթանող առաջնային օղակ՝ փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը նշել է. *«Մեր նպատակն է մարզերում ստեղծել ժամանակակից մշակութային եւ երիտասարդական միջավայր, որում կներառվեն նաեւ գրադարանային արդիականացված ռեսուրսներ՝ ապահովելու համայնքի՝ մշակութային եւ երիտասարդական կյանքին լիարժեք մասնակցությունը»:*

Մշակութային նոր միջավայրերի ստեղծման համար նախանշվել է քաղաքների ենթակառուցվածքային, աշխարհագրական, տեղական առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը:

Համայնքներում ԿԳՄՍ նախարարի տեղակալին ներկայացվել են մշակութային հաստատությունների գործունեությունը եւ դրանցում երիտասարդների մասնակցությունը:

Կառավարության նիստում

Գործադիրը հավանության է արժանացրել *«Թանգարանների մասին»* օրենքը

ՀՀ կառավարության նիստում գործադիրը հավանության է արժանացրել *«Թանգարանների մասին»* օրենքի նախագծի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունը, որը սահմանված կարգով ներկայացվել է Ազգային ժողով:

Համաձայն հիմնավորման՝ վերջին տարիներին նյութական եւ ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ ընդունվել են մի շարք ՀՀ օրենքներ (*«Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին», «Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին», «Արխիվային գործի մասին», «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին», «Գրադարանների եւ գրադարանային գործի մասին»*), որոնք կարգավորում են մշակութային ժառանգության բնագավառները: Անհրաժեշտություն է առաջացել նաեւ կարգավորել թանգարանների ոլորտը. մասնավորապես՝ հստակեցված չեն մշակութային ժառանգության անբաժանելի մաս կազմող ՀՀ թանգարանային հավաքածուի, ինչպես նաեւ յուրաքանչյուր թանգարանի հավաքածուի օգտագործման, տնօրինման, թանգարանների ստեղծման (անկախ սեփականության ձեւից) խնդիրները:

Օրենքի նախագիծը մշակելու նպատակով նախարարության կողմից ուսումնասիրվել է թանգարանային գործի զարգացվածության մակարդակով աչքի ընկնող մի շարք երկրների (Կանադա, ԱՄՆ, Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Գերմանիա, Լատվիա, Ճապոնիա), ինչպես նաեւ ԱՊՀ երկրների թանգարանային գործը կարգավորող օրենսդրությունը: Օրենքում կիրառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակում Թանգարանային միջազգային խորհրդի կողմից ընդունված Թանգարանների աշխատողների մասնագիտական վարքագծի կանոնագիրքը, ինչը եվրոպական պետությունների՝ Գերմանիայի Դաշնության, Լյուքսեմբուրգի, Իտալիայի թանգարանների ղեկավարման համար ճանաչվել է իրավական փաստաթուղթ: Եվրոպական Միության ԹԱՅԵՔՍ տեխնիկական օժանդակության եւ տեղեկատվության փոխանակման գործիքի շրջանակում նախագիծը քննարկվել է նաեւ փորձագիտական առաքելության կողմից:

Օրենքի նախագծում կարգավորվել են ոչ միայն պետական թանգարանային հավաքածուի, այլեւ ոչ պետական թանգարաններին առնչվող հարաբերությունները: Հստակեցվել են պետական սեփականություն չհանդիսացող մշակութային արժեքները ՀՀ պետական թանգարաններում ժամանակավոր պահպանության հանձնելու, թանգարանի ֆոնդերը թանգարանային առարկաներով համալրելու, հաշվառելու, հանրայնացնելու սկզբունքները, թանգարանների եւ հավաքածուների սեփականատերերին պետական աջակցության ձեւերը, ինչպես նաեւ թանգարանների հավատարմագրման եւ կարգավիճակ ստանալու ընթացակարգը:

Այսպիսով, օրենքի ընդունմամբ, կապահովվի մշակութային ժառանգության պահպանության եւ պաշտպանության համակարգված գործունեությունը, մշակույթի ոլորտում տնտեսական նոր մեխանիզմների եւ շուկայական հարաբերությունների զարգացումը, ինչպես նաեւ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց միջեւ ծագող հարաբերությունների կարգավորումը մշակույթի բնագավառում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախարարին կից հասարակական խորհուրդ

Օրակարգում՝ Արցախից բռնի տեղահանված ուսուցիչների եւ սովորողների աջակցության ծրագրերը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարին կից հասարակական խորհուրդը գումարել է իր հերթական նիստը, որը վարել է խորհրդի նախագահ, նախարար **Ժաննա Անդրեասյանը:** Նիստի օրակարգում ներառված էին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների հարթակի եւ ուսանողների աջակցության ծրագրերի վերաբերյալ հարցերը:

Ողջունելով խորհրդի անդամներին՝ նախարարը շնորհակալություն է հայտնել ակտիվության եւ նախաձեռնողականության համար՝ հատկապես կարեւորելով այն փաստը, որ նիստերի օրակարգը մի քանի անգամ ձեւավորվել է հենց խորհրդի անդամների առաջարկով. *«Հասարակական խորհուրդն արդյունավետ կարող է գործել միայն այն պարագայում, երբ տեղի է ունենում բազմակողմ գործընթաց, եւ յուրաքանչյուրի ներկայացրած հարցը կարող է քննարկման առիթ դառնալ: Միայն համատեղ աշխատանքի եւ խորհրդի անդամների առաջարկների միջոցով կարելի է բարելավվել իրականացվող գործընթացների արդյունավետությունը»,-* նշել է նախարարը՝ եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնելով հասարակական խորհրդին, որն այս կազմով անցկացնում էր իր վերջին նիստը:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ այս անգամ որոշում է կայացվել նիստի օրակարգում ներառել այս պահին հանրությանը հետաքրքրող ամենակարեւոր հարցը՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների կրթության, մշակութային եւ այլ իրավունքների ապահովման խնդիրների վերաբերյալ: Նախարարն ընդգծել է՝ կարճաժամկետ եւ միջնաժամկետ ծրագրերի բացի՝ անհրաժեշտ է ունենալ նաեւ երկարաժամկետ ծրագրեր՝ ակնկալելով այս հարցում խորհրդի անդամների կողմից ներկայացվող առաջարկները: *«Ուսանողների մասով աջակցության ծրագրերը սահմանված են այս ուսումնական տարվա համար, եւ ներկայում մենք փորձում ենք գտնել ամենաարդյունավետ եղանակը՝ այդ աջակցությունը շարունակելու ուսումնական հաջորդ տարիների համար՝ միաժամանակ խթանելով լավ սովորելը»,-* նշել է նախարարը՝ հավելելով, որ նույնը վերաբերում է նաեւ բռնի տեղահանված ուսուցիչների աջակցությանը, եւ ավելի երկարաժամկետ կտրվածքով այդ խնդիրները ճիշտ հասցեագրելու կարիք կա:

Նախարարն առանձնակի կարեւորել է նաեւ Լեռնային Ղարաբաղի նյութական եւ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման հարցերը: Նրա խոսքով՝ նախարարությունը դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին եւ նմանատիպ մանդատ ունեցող բոլոր հնարավոր միջազգային կառույցներին՝ ներկայացնելով նյութական ժառանգության, հուշարձանների ցանկերը, ինչպես նաեւ վանդալիզմի գրանցված դեպքերը:

«Այս ուղղությամբ, իհարկե, աշխատանքներ արվում են՝ հատկապես տարբեր հարթակներում խնդրի վերաբերյալ միջազգային տեսանելիությունը բարձրացնելու ուղղությամբ, բայց կարող են լինել նաեւ այլ առաջարկներ՝ լրացուցիչ գործիքակազմի կիրառության վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ հասարակական խորհրդի կազմում կան նաեւ մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ: Կարեւորում եմ նաեւ ոչ նյութական մշակութային ժառանգության հարցը. նույնիսկ կարող է լինել առաջարկ՝ ամբողջական փաթեթ պատրաստել Լեռնային Ղարաբաղի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման մասով՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, դրա վտանգման իրական աստիճանը եւ ոչ նյութական մշակութային ժառանգությունը հատուկ պաշտպանության տակ առնելու որոշակի միջազգային միջոցներ փնտրելը»,- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ կարեւորելով նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների՝ տարբեր ոլորտներում մասնագիտական աշխատանքի հնարավորությունը եւ նրանց ներուժի օգտագործումը:

ԿԳՄՍ նախարարության հանրակրթության վարչության պետ **Թամարա Սարգսյանը** ներկայացրել է ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության հարթակը՝ նշելով, որ այնտեղ տեղադրվել են բոլոր մարզերում առկա թափուր հաստիքները: Ըստ Թամարա Սարգսյանի՝ ներդրված մեխանիզմը գործում է պարզ սկզբունքով. ուսուցիչներից ակնկալվում է միայն առաջնային տեղեկատվություն գրանցել իրենց մասին. *«Այդ պարզ տեղեկատվության միջոցով ուսուցիչները կարողանում են հարթակում գրանցվել եւ ընտրել այն բնակավայրն ու դպրոցը, որտեղ ցանկանում են աշխատել: Սա կարեւոր է այն տեսանկյունից, որ շատ մարդկանց համար այն դարձել է նաեւ բնակության վայր ընտրելու ուղենիշ, որովհետեւ այդ որոշումը կայացնելու գործոններից մեկն աշխատանք գտնելն է: Ըստ վարչության պետի՝ հարթակը գործարկվել է հոկտեմբերի կեսերից, եւ արդեն 153 ուսուցիչ դիմել եւ սկսել է աշխատել: «Աջակցության ծրագրի էությունը կայանում է նրանում, որ բացի աշխատավարձից՝ ուսուցիչները ունենում են նաեւ 30 տոկոս հավելավճար, իսկ որոշ համայնքներում՝ նաեւ 50 հազար դրամ լրավճար ստանում: «Մենք տարեվերջին կամփոփենք ամբողջական տվյալները, եւ կարծում եմ՝ ավելի լավ պատկեր կունենանք այն մասով, թե Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված քանի ուսուցիչ է կարողացել կրթության ոլորտում ներգրավվել»,-* նշել է Թամարա Սարգսյանը:

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ **Սարգիս Հայոցյանը** ներկայացրել է ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների աջակցության ծրագրերը: Ըստ Հայոցյանի՝ մինչեւ Կառավարության համապատասխան որոշումը՝ նախարարի շրջաբերականով բուհերին հանձնարարվել է տեղահանված ուսանողներին ներգրավել կրթական ծրագրերում՝ անգամ որեւէ փաստաթուղթ չունենալու դեպքում. Սարգիս Հայոցյանի խոսքով՝ Կառավարության որոշմամբ հաստատվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ԼՂ նախնական, միջին եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա եւ հեռակա ուսուցման համակարգի այն ուսանողների 2023-2024 ուստարվա 1 կիսամյակի ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման մասին որոշումը, որոնք սահմանված կարգով տեղափոխվել են ՀՀ պետական ուսումնական հաստատություններ: *«Ներկա դրությամբ ունենք 1837 ուսանողներ, որոնք ներգրավված են պետական բուհերում՝ տարբեր կրթական ծրագրերով: Եթե տվյալ կրթական ծրագիրը ՀՀ բուհերում չի իրականացվում, ապա նմանատիպ կրթական ծրագրերով տեղափոխության հնարավորություն է ընձեռնված»,-* նշել է կոմիտեի նախագահը՝ հավելելով, որ կա ուսանողների եւս 2 խումբ, որոնք հայտնվել են խոցելի իրավիճակում. մի խումբը ՀՀ բուհերում սովորող այն ուսանողներն են, որոնք ուսման վարձի փոխհատուցում են ստացել ԼՂ-ի կողմից: *«Այժմ այս մասով Կառավարության որոշման նախագիծ է շրջանառվում, որպեսզի նրանց վարձավճարներն էլ փոխհատուցվեն, իսկ մյուսը խումբը վճարովի համակարգում սովորող ԼՂ այն քաղաքացիներն են, որոնք մինչեւ բռնի տեղահանումը սովորել են ՀՀ բուհերում, եւ ներկայում նրանց ընտանիքները հայտնվել են ֆինանսական դժվար իրավիճակում: Այդ հարցով համագործակցում ենք դոնոր կազմակերպությունների հետ՝ որոշակի լուծումներ գտնելու նպատակով»,-* նշել է նա:

Զեկույցներից հետո հասարակական խորհրդի անդամները ներկայացված ծրագրերի վերաբերյալ մի շարք հարցեր են ուղղել, որոնք, մասնավորապես, վերաբերել են ԼՂ-ից բռնի տեղահանված աշակերտների կրթության եւ նոր չափորոշչով տպագրված դասագրքերի ապահովմանը, ուսուցիչների աշխատավարձերին եւ հավելավճարներին, ՏՄԱԿ-ի պայմաններին եւ այլն:

Օրակարգի վերջին հարցը վերաբերել է ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի անդամների ռոտացիայի կիրառմանը, որն իրականացվում է երկու տարին մեկ անգամ:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ միջնադարյան համալսարանները

Հայ ժողովրդի կրթության, մշակույթի պատմությունը վկայում է, որ հնում, մասնավորաբար՝ միջնադարում, մենք ունեցել ենք բարձր տիպի զանազան դպրոցներ՝ վարդապետարաններ, վարժարաններ, ճեմարաններ, համալսարաններ, որոնք պատրաստել են եկեղեցական գործիչներ, մանկավարժներ, արվեստի ու գիտության մասնագետներ: Միջնադարյան համալսարաններից շատերը աստիճանաբար վերածվել են կատարյալ համալսարանների, որով եւ հաստատապես դրվել են հայկական բարձրագույն կրթության հիմքերը: Ստորեւ ամփոփ ներկայացնեք եւ ըստ արժանվույն գնահատենք հայ միջնադարեան համալսարանների (Նարեկավանքի վարդապետարան, Սիսի համալսարան, Նոր Գետիկի կամ Գոշավանքի համալսարան, Անիի վարդապետարան, Հաղպատի բարձրագույն դպրոց, Տաթեւի համալսարան, Գլաձորի համալսարան, Դրազարկի վարդապետարան) գործունեությունը:

Նարեկի (Նարեկավանքի) վարդապետարան

Վանա լճի հարավային ափերին տարածված Ռշտունիք գավառի Նարեկ գյուղում գործել է Նարեկի (Նարեկավանքի) վարդապետարանը: Որպես հիմնադրման դար՝ նշվում է X-ը, իսկ հիմնադիրն է համարվում նշանավոր փիլիսոփա ու մտածող Անանիա Նարեկացին, որն էլ դարձել է առաջին ուսուցչապետը: Նարեկի վարդապետարանը հիշատակվում է որպես հայ գրչության եւ մանրանկարչության հայտնի կենտրոն (X-XI դարերի): Զարգացած էին երաժշտագիտությունն ու մեկնաբանական արվեստը: Անանիա Մոկացու մահվանից հետո (978թ.) ուսուցչապետ է դարձել նրա արժանավոր աշակերտ, աշխարհահռչակ Գրիգոր Նարեկացին (նրա հետ Նարեկավանքում ուսուցանել են նաեւ իր եղբայրները): Նարեկի վարդապետարանի հայտնի սաներից էր X դ. պատմիչ Ուխտանեսը, որն իր ուսուցիչ Անանիա Նարեկացու հանձնարարությամբ գրել է *«Հայոց պատմություն»* երկը:

Սիսի համալսարան

Կիլիկիայի հայկական պետության մայրաքաղաքում հայտնի քաղաքական եւ հոգեւոր գործիչ Ներսես Լամբրոնացին XII դարի վերջերին հիմնադրել է աշխարհիկ համալսարան, որտեղ կրթություն են ստացել ժամանակի հայ նշանավոր գիտնականներ ու պետական գործիչներ: Այս համալսարանում գիտական գործունեություն են ծավալել Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին: *«Յոթ ազատ արվեստներից»* բացի՝ դասավանդվել է պատմագրություն, ազգային եւ թարգմանական գրականություն, փիլիսոփայություն եւ այլն: Ուսումնառության իդեալը աթենական կրթություն էր: Սա վկայում է այն մասին, որ Մայր Հայաստանում եւ Կիլիկյան Հայաստանում վերածնունդն ավելի վաղ է սկսվել:

Նոր Գետիկի կամ Գոշավանքի համալսարան

Այս համալսարանը հիմնադրել է հայտնի առակագիր Մխիթար Գոշը XII դարի վերջին Նոր Գետիկի վանական համալիրում, որն հետագայում կոչվել է Գոշավանք: Դասավանդվել են հայոց եւ օտար լեզուներ (հունարեն, լատիներեն), քերականություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, երաժշտություն, գրչության արվեստ, նկարչություն: Սաները ստանում էին գիտնականի՝ վարդապետի աստիճան: Մեծ վերելք է ապրել XIII դարում: Նոր Գետիկի կամ Գոշավանքի համալսարանում են ուսում ստացել հայ մշակույթի ականավոր գործիչներ Վանական Վարդապետը եւ Կիրակոս Գանձակեցին, ովքեր իրենց հիմնած դպրոցներում շարունակել են Գոշավանքի համալսարանի ավանդները: Գանձակեցին Գոշի մասին գրել է. *«Եվ նրա իմաստության համբավը տարածվեց ամբողջ աշխարհում, եւ բազմաթիվ սովորողներ էին նրա մոտ ուսանում»:* Գոշավանքում ընդօրինակվել եւ ստեղծվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնք պահվել են վանքի գրատանը:

Անիի վարդապետարան

Անիի բարձրագույն դպրոցը հիմնադրվել է XI դարում եւ գործել է մինչեւ XIII դարը: Այն հայ մտավորականության պատրաստման, գիտության ու արվեստի զարգացման կարեւորագույն օջախ էր: Բարձրագույն դպրոցն աչքի էր ընկնում իր աշխարհիկ բնույթով: Դասավանդվում էին արտաքին-իմաստասիրական, մաթեմատիկական, ճարտարապետա-կառուցողական, բժշկաբնագիտական գիտություններ: Տեւական ժամանակ դպրոցը ղեկավարել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (XI դարում), ապա՝ Հաղպատից հրավիրված Հովհաննես Սարկավագ Իմաստասերը (XI դարի վերջից եւ XII դարասկզբում): Վերջինիս ռաբունապետության տարիներին վարդապետարանը ունեցել է բազմաթիվ շրջանավարտներ: Այս դպրոցի սաներից են եղել Սամվել Անեցին, Գրիգոր Փակակալը եւ ուրիշներ:

Հաղպատի բարձրագույն դպրոց

Հաղպատի վանքի կառուցումից անմիջապես հետո (976 թ.) նրա հիմնադիր եւ առաջին վանահայր, նշանավոր գրիչ Սիմեոն վարդապետը հիմնեց Հաղպատի դպրոցը: Այստեղ դասավանդվում էին փիլիսոփայություն, քերականություն, հռետորություն, աստվածաբանություն եւ այլ գիտություններ: Դպրոցի նշանավոր ռաբունապետերից էին փիլիսոփա, տոմարագետ Յովհաննես Իմաստասերը, Սամվել Անեցին, Դավիթ Քոբայրեցին, Մխիթար Քոբայրեցին եւ այլք: Հաղպատի դպրոցում հիմնականում ծաղկեց գրչության արվեստը: Այստեղ ընդօրինակվում եւ ստեղծվում էին հայ մանրանկարչության հոյակապ հուշարձաններ: Հիշատակենք *«Հաղպատի Ավետարանը»,* որը մանրանկարչական արվեստի լավագույն նմուշներից է: Հաղպատի բարձրագույն դպրոցը գոյատեւեց մի քանի դար եւ սերունդներին պարգեւեց տասնյակից ավելի արժեքավոր ձեռագրեր:

Դրազարկի վարդապետարան

Կիլիկյան Հայաստանի ամենահնագույն ուսումնագիտական կենտրոնը՝ Դրազարկի (Թրազարկ) վարդապետարանը, հիմնել է Թորոս Ա իշխանը (1100-1129) XII դ. սկզբին Տավրոս լեռների ստորոտին՝ Սիս մայրաքաղաքի մոտակայքում գտնվող համանուն վանքում: Դրազարկն հռչակված էր նաեւ որպես մանրանկարչության եւ ծաղկողական արվեստի կենտրոն, ունեցել է լեզուների բարձրորակ դասավանդման համբավ: Վարդապետարանի սաներից էր հայտնի մանրանկարիչ Սարգիս Պիծակը: Մեծ համբավ ունեին Դրազարկի երաժշտագիտության ուսուցիչները: Նրանցից էին Դրազարկի ուսուցչապետներ Թորոս Երաժիշտը (Թորոս դասապետ) եւ Հովսեփ Երաժշտապետը: Այստեղ ընդօրինակվել են բազմաթիվ Երգարան մատյաններ՝ խազագրված տաղերով: Դրազարկի վարդապետարանը հայտնի էր նաեւ որպես լեզուների դասավանդման կարեւորագոյն կենտրոն: Այստեղից են դուրս եկել Կիլիկյան պետության բազմաթից դիցանագետներ: XIII դ. առաջին կեսին Դրազարկի ուսուցչապետն էր Հեթում Ա (1226-1270) արքայի եղբայր Բարսեղը, որի իրավասությանն էին հանձնված թագավորության արտաքին հարաբերությունները: Վերոհիշյալ Թորոս դասապետը XIII դ. վերջին եղել է Հայոց դեսպան Անգլիայում: Դրազարկի հետ է կապված միջնադարի խոշորագույն առակագիր Վարդան Այգեկցու գործունեությունը:

Գլաձորի համալսարան

Միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կենտրոնը՝ Գլաձորի համալսարանը, որը դասվում է միջնադարյան Եվրոպայի համալսարանական հաստատությունների շարքին, հիմնադրվել է 1282 թվականին, Ներսես Մշեցու կողմից, գործել մինչեւ 1340-ական թթ.: Համալսարանը հովանավորել են Պռոշյան եւ Օրբելյան իշխանական տները, ինչպես նաեւ Սյունիքի եկեղեցական իշխանությունը: Նրա բազմամյա ղեկավարը (մինչեւ 1331-ը) եղել է Եսայի Նչեցին: Վերջինիս ռեկտորության տարիներին համալսարանը համարվում էր *«Հիսուսական համալսարանե, «Երկրորդ Աթենք»* եւ որպես գիտության ու մշակույթի կենտրոն՝ *«Մայրաքաղաք ամենայն իմաստից»:* Գլաձորը *«փայլեր որպէս զարգերակն ի վերայ աշխարհի… զի ազգս հայկազեան մեծ պարծանս ուներ զսա ի վերայ ամենայն ազգի»:* Համալսարանն ուներ ներքին կանոնադրություն, ուսումնագիտական աստիճանավորում, ավարտաճառերի պաշտպանություն: Իր բնույթով ու թեքումով նմանվել է հասարակագիտական կամ արվեստից գիտությունների համալսարանի: Դասավանդվել են աստվածաբանություն, դիցաբանություն, իմաստասիրություն, մատենագիտություն, քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, թվաբանություն, աստղաբաշխություն-տոմարագիտություն, երկրչափություն: Ունեցել է երեք լսարան (մասնագիտացում)՝ ա. ուսումնարան ներքին եւ արտաքին գրոց, բ. գրչության արվեստի՝ մատենագիտության եւ մանրանկարչության, գ. խազագիտության եւ երաժշտության: Գլաձորի համալսարանում դասավանդել են շուրջ երկու տասնյակ ուսուցչապետներ եւ վարդապետներ, այդ թվում՝ Դավիթ Սասնեցին, Գրիգոր, Մարտիրոս, Հովհաննես, Կիրակոս ու Կյուրեղ ռաբունապետները: Գլաձորի համալսարանում ստեղծագործել եւ որպես ուսուցիչներ աշխատել են նշանավոր մանրանկարիչներ Թորոս Տարոնացին, Ավագը եւ Մոմիկը: Ուսում ստանալու նպատակով այստեղ են ժամանել աշակերտներ Հայաստանի եւ Կիլիկիայի շատ վայրերից: Հայկական ուսումնամշակութային կենտրոնների համար Գլաձորի համալսարանը պատրաստել է 350 ուսուցիչ-վարդապետներ: Ուսման տեւողությունը եղել է 7-8 տարի՝ չհաշված քահանայական կրթության տարիները: Շրջանավարտները պարտադիր քննություն են հանձնել դասընթացներից: Շրջանավարտներին վարդապետի աստիճանի շնորհումը տեղի էր ունենում հանդիսավոր արարողությամբ, հայցող թեկնածուները հանդես էին գալիս ավարտաճառերով: Նրանք ստացել են *«վարդապետական հրաման»* կամ *«վարդապետական գավազան»,* որը նրանց իրավունք է տվել *«դասասաց»* լինելու: Գլաձորում են գրվել ու զարդարվել տասնյակ ձեռագիր մատյաններ, որոնցից մի քանիսը պահվում են Մաշտոցի անվան մատենադարանում, Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում, Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքում, Լոնդոնի Բրիտանական թանգարանում եւ այլ վայրերի ձեռագրական հավաքածուներում:

Տաթեւի համալսարան

Սյունյաց բարձր տիպի դպրոցը որպես համալսարան հիշատակվում է 1380-ական թվականների սկզբներից: Գլաձորի համալսարանի փակվելու պատճառով Հովհան Որոտնեցին տեղափոխվել է Որոտնավանք, հիմնել դպրոց, ապա հաստատվել Տաթեւում եւ, վերակառուցելով Տաթեւի կրթարան-վարդապետարանը, հիմք է դրել նոր, բարձր տիպի դպրոցի՝ համալսարանի: Նրա օրոք այն *«անձուկ եւ խաւարեալ ժամանակիս փայլէր որպէս զարեգակն ի վերայ աշխարհի»:* Գոյատեւել է մինչեւ 1435 թ.: Այնտեղ էին հավաքվել ժամանակի գիտուն եւ բանիմաց շատ վարդապետներ, մոտ 500 հոգեւորականներ, փիլիսոփաներ, երաժիշտներ, գրողներ, նկարիչներ, ինչպես նաեւ արվեստագետներ ու արհեստավորներ: Հետագայում միաբանների թիվը հասել է 1000-ի: Տաթեւի համալսարանը հովանավորել է Օրբելյան իշխանական տունը, ինչպես նաեւ Սյունիքի եկեղեցական իշխանությունը: Ունեցել է երեք լսարան (ուսումնարան)՝ ուսումնարան ներքին եւ արտաքին գրոց, գրչության արվեստի, երաժշտության: Առաջինում ուսումնասիրվել են փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականություն, բանաստեղծական արվեստ, մանկավարժություն, մայրենի լեզու, գրականություն, պատմություն եւ այլն, երկրորդում՝ գրչության արվեստ, գեղագրություն, գրքերի գեղարվեստական ձեւավորում, մանրանկարչություն, երրորդում՝ հին երգ ու երաժշտություն, երաժշտության տեսություն: 1386 թ. ռաբունապետ է դարձել Գրիգոր Տաթեւացին: Տաթեւացին կատարելագործել է համալսարանի ծրագիրը, կազմել դասագրքեր (*«Գիրք հարցմանց», «Գիրք քարոզության…», «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ»*): Առանձնակի ուշադրություն է դարձվել փիլիսոփայությանը: Համալսարանն ունեցել է կանոնադրություն, ուսումնագիտական աստիճանավորում: Մշտապես ունեցել է մեծ թվով սովորողներ (150-300 եւ ավելի), իսկ ուսման տեւողությունը 7-8 տարի էր՝ չհաշված քահանայական կրթության տարիները: Սաներից են եղել Թովմա Մեծոփեցին, Առաքել Սյունեցին, Բարսեղ Բաղիշեցին, Մատթեոս Ջուղայեցին, Սիմեոն Եղվարդցին եւ ուրիշներ: Տաթեւի համալսարանն ունեցել է հարուստ մատենադարան, որը գոյատեւել է մինչեւ 1911-12-ը (մատենադարանի 140 ձեռագիր մատյաններ այժմ պահվում են Երեւանի Մատենադարանում):

Հայ միջնադարյան համալսարանների համակողմանի քննությունը մեծապես կարող է նպաստել հայ մշակույթի բազմաթիվ իրողությունների բացահայտմանը: Ժամանակի ոգու եւ պայմանների թելադրանքով՝ մեր կրթական համակարգը որոշակի առաջադիմական մտահղացումներով է առաջնորդվել: Երբ Եվրոպական Միջնադարում մոլեգնում էր ինկվիզիցիան, երբ ճշգրիտ գիտության (բժշկություն, տիեզերագիտություն…) ներկայացուցիչները հալածվում, խարույկի էին հանվում, երբ նույնիսկ կենդանիների հերձման փորձերը չէին հանդուրժում, Հայաստանում ուսուցողական նկատառումներով դիահերձմամբ ուսումնասիրում էին ներքին օրգանները (անատոմիա, ֆիզիոլոգիա…), դասախոսվում էին կենսաբնագիտական այնիպիսի մտքեր, որոնց համար Եվրոպայում մի քանի անգամ խարույկի կհանեին, Կիլիկյան բժշկանոցներում թույլատրվում էր հանցագործների վրա փորձարկումներ անել (որպես արդարացում մեկի տառապանքը շատերի բուժման միջոց կարող է դառնալ) եւ այլն: Առայսօր հայ միջնադարյան համալսարանների ուսումնասիրումը արդիական է. կարող են երեւան գալ քողարկված փաստեր, վարկածներ: Վերջերս անդրադարձ է կատարվել հայագիտության մեջ առայժմ չլուծած մի հարցի՝ Գլաձորի համալսարանի տեղորոշմանը: Համալսարանի գտնվելու վայրի մասին պահպանված բազմաթիվ վկայությունների, պատմական փաստերի, աղբյուրագիտական նյութերի, կատարված դիտարկումների հիման վրա ներկայացվել է մի նոր վարկած (Առավել մանրամասն տե՛ս Տ. Մկրտչյան, Գլաձորի համալսարանի տեղորոշման նոր վարկած, Եր., 2016):

Հայ մշակույթի, կրթության, գիտության զարգացման ասպարեզում հսկայական նշանակություն են ունեցել միջնադարյան համալսարանները: Վերոնշյալ նյութը փաստում է, որ հայը բոլոր ժամանակներում է գիտակցել բարձրագույն կրթության տեղն ու դերը, արժեւորել համակարգված գիտելիքների ու գործնական հմտությունների նշանակությունը:

Վալտեր ԲԵՐԲԵՐՅԱՆ
ԵՊՀ դասախոս

«Վիլյամ Սարոյանը եւ արվեստը»

Սարոյանագիտության մեջ աննախադեպ միջազգային գիտական կոնֆերանս

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ *«Վիլյամ Սարոյանը եւ արվեստը»* միջազգային գիտական երկօրյա կոնֆերանս: Սարոյանագիտության մեջ աննախադեպ այս կոնֆերանսը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը եւ Վիլյամ Սարոյան հիմնադրամը (Սան Ֆրանցիսկո): Սան Ֆրանցիսկոյում գործող Վիլյամ Սարոյան հիմնադրամը, որը 1966 թվականին ստեղծել է հենց ինքը՝ Վիլյամ Սարոյանը, ներկայումս գլխավորում է Սքոթ Սեդրակյանը:

Առաջին հայացքից կարող է տարակուսանք առաջացնել կոնֆերանսի խորագիրը՝ *«Վիլյամ Սարոյանը եւ արվեստը»:* Չէ՞ որ Վիլյամ Սարոյանը, ինչպես գիտենք բոլորս, ականավոր գրող է: Ու թեւ, հիշենք, նա ստեղծագործել է անգլերեն ու նկարագրել ամերիկյան կյանքը, սակայն ոգին, որը նրան մղել է ստեղծագործելու՝ եղել իր հայ ինքնությունը: Եվ, այնուամենայնիվ, Ի՞նչ կապ ունի Վիլյամ Սարոյանն արվեստի հետ, իսկ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտն էլ՝ Վիլյամ Սարոյանի հետ:

Այս տեսակետից՝ կոնֆերանսը դարձավ հայտնությունների հարթակ:

Տաղանդավոր մարդը, այս դեպքում՝ Վիլյամ Սարոյանը, տաղանդավոր է իր բոլոր դրսեւորումներում: Պարզվում է, որ Սարոյանը նկարել է, ստեղծել երգեր...Կոնֆերանսի բանախոսները ներկայացրեցին Սարոյանի՝ մինչ օրս մեզ անհայտ նկարչական եւ երաժշտական ժառանգությունը:

Մյուս կողմից՝ Սարոյանի ստեղծագործություններն ինքնին խթանել են հայ եւ ոչ միայն հայ արվեստի զարգացմանը: Սարոյանի պիեսները բեմադրվել են Հայաստանի եւ սփյուռքի թատրոններում եւ մեծ դեր կատարել հայ բեմադրիչների եւ դերասանների ստեղծագործական ճակատագրում:

Սարոյանի ստեղծագործությունների հիման վրա գրվել են նաեւ երաժշտական ստեղծագործություններ՝ երգեր եւ մինչեւ անգամ օպերաներ:

Սարոյանի կերպարը մարմնավորվել է հայ կերպարվեստում, ի մասնավորի՝ Սարյանի եւ Սիրավյանի գործերում:

Սկզբից եւեթ նշենք, որ *«Վիլյամ Սարոյանը եւ արվեստը»* միջազգային գիտական կոնֆերանսը դարձավ նոր խոսք՝ սարոյանագիտության ասպարեզում, առաջին քայլը՝ արվեստագիտական սարոյանագիտության ուղղությամբ: Կարծում ենք՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը եւ Վիլյամ Սարոյան հիմնադրամը՝ Սքոթ Սեդրակյանի ղեկավարությամբ, հաջողությամբ կշարունակեն արդյունավետ համագործակցությունը:

Ողջունելով գիտաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին եւ հյուրերին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը** մասնավորապես նկատեց. *«Այս գիտաժողովը նվիրված է միջգիտակարգային հիմնախնդրի՝ գրականության եւ արվեստի առնչություններին: Սա չափազանց շահեկան նախաձեռնություն է, որովհետեւ գիտություններն այսօր զարգանում են տարբեր գիտաճյուղերի հատույթներում: Եվ այս հատույթներում է, որ այսօր մենք կարող ենք նոր խոսք ասել: Գիտաժողովը հնարավորություն է մեկ անգամ եւս արժեւորելու Սարոյանի գրական ժառանգությունը եւ այն դիտարկելու արվեստի տեսանկյունից»:*

Ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, օգտվելով պատեհ առիթից, ներկայացրեց գողտրիկ հուշ. թե ինչպես առաջին անգամ *«Իմ սիրտը լեռներում է»* բեմադրությունը դիտեց կինոյի եւ թատրոնի հայ անվանի դերասան Հրաչյա Ներսիսյանի հիշատակին նվիրված միջոցառման ժամանակ՝ Վահրամ Փափազյանի եւ Վարդուհի Վարդերեսյանի մասնակցությամբ:

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանն** անդրադարձավ ականավոր գրող Վիլյամ Սարոյանի ժառանգությանը եւ նշեց, որ Սարոյանը տաղանդավոր էր իր բոլոր դրսեւորումներում՝ նկարչական, երաժշտական, թատերական, ինչն ամբողջովին դեռեւս չբացահայտված, սակայն անգնահատելի ժառանգություն է: *«Անչափ կարեւորում եմ կոնֆերանսի անցկացումը, որի շրջանակում սարոյանական արվեստի տարբեր դրսեւորումներ կդրվեն գիտական հենքի վրա: Տարբեր քննարկումների, մտքերի փոխանակման արդյունքում եւս մեկ անգամ հնարավորություն կունենանք հանրահռչակելու, երիտասարդներին ներկայացնելու սարոյանական անգնահատելի արվեստն ու գրականությունը»,-* նշեց նախարարի տեղակալը եւ բարի երթ մաղթեց կոնֆերանսի մասնակիցներին:

Ավարտելով իր խոսքը՝ Դ.Դանիելյանն ընթերցեց հատված Սարոյանի *«Հայը եւ հայը»* պատմվածքից:

Ողջունելով կոնֆերանսի մասնակիցներին՝ Վիլյամ Սարոյան հիմնադրամի նախագահ **Սքոթ Սեդրակյանը** նշեց. *«Ուրախ եմ միանալու այս միջազգային կոնֆերանսին, որի օրակարգում Սարոյանի կյանքի եւ ստեղծագործության դրվագներն են: Մտածում էի, թե ինչպես կարծագանքեր Սարոյանն այս հանդիպմանը, որն անցկացվում է իր ծննդից 115 տարի անց, Հայաստանում, եւ որի ընթացքում ելույթ են ունենում առաջատար գիտնականներ: Կարծում եմ, որ նա կասեր. «Սա ամենազվարճալի բանն է, որ երբեւէ տեսել եմ»: Բայց ես գիտեմ, որ նա շատ գոհ կլիներ: Սարոյանը շատ ուշադիր էր իր ժառանգության նկատմամբ: Մենք բոլորս պետք է հպարտ լինենք, որ այս գիտական կոնֆերանսի մի մասն ենք»:*

Երկօրյա գիտական կոնֆերանսը Սարոյանի հանճարի շուրջ համախմբել էր սարոյանասերներին եւ սարոյանագետներին աշխարհի 6 երկրներից: Հայաստանից մասնակցում էին ՀՀ ԳԱԱ Արվեստի, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության եւ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտները, Ամերիկայի Միացյալ Նահանգներից՝ Նյու Յորքի ու Վաշինգտոնի, Սան Ֆրանցիսկոյի ու Բոստոնի, Նյու Ջերսիի, Ռուսաստանից՝ Մոսկվայի ու Սանկտ Պետերբուրգի, Մեծ Բրիտանիայից՝ Լոնդոնի, Իսլանդիայից՝ Ռեյկյավիկի, Սերբիայից՝ Բելգրադի ներկայացուցիչները:

Լիագումար առավոտյան նիստում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ **Հենրիկ Հովհաննիսյանը** հանդես եկավ *«Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը Վարդան Աճեմյանի բեմադրությամբ»* զեկուցմամբ: Հայ արվեստաբանության մեջ առաջին անգամ անդրադարձ եղավ Սարոյանի նկարչական ժառանգությանը. Վիլյամ Սարոյան հիմնադրամի նախագահ Սքոթ Սեդրակյանը (ԱՄՆ, Սան Ֆրանցիսկո) ներկայացրեց *«Վիլյամ Սարոյանը՝ նկարիչ»* զեկուցումը: Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, **Ալլիտա Դոլուխանյանի** բանախոսությունը ուշագրավ նրբագծեր ավելացրեց Գ.Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում 1961-ին Վարդան Աճեմյանի իրականացրած *«Իմ սիրտը լեռներում է»* լեգենդար բեմադրությանը: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիլիթ Երնջակյանը** թերթեց Վիլյամ Սարոյանի եւ Ալան Հովհաննեսի ստեղծագործական համագործակցության էջերը՝ հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ ներկայացնելով Սարոյանի տեքստերով Ալան Հովհաննեսի գրած ստեղծագործություններից մի քանիսը: Հայ Առաքելական Եկեղեցու Արեւելյան Առաջնորդարանի գործադիր տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու **Վարդան Մատթեոսյանը** (ԱՄՆ, Նյու Յորք) ներկայացրեց *«Վիլյամ Սարոյանը եւ հայոց դեմ խտրականությունը Ֆրեզնոյում»* զեկուցումը: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի ավագ գիտաշխատող, ԵԹԿՊԻ ավագ դասախոս, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անուշ Ասլիբեկյանը** քննության առավ Արմեն Էլբակյանի սարոյանական բեմադրությունները՝ բացահայտելով վերջինիս ռեժիսորական ձեռագրի առաձնահատկությունները: SR Socially Relevant Film Festival, NY հիմնադիր տնօրեն - գեղարվեստական ղեկավար **Նորա Արմանին** (ԱՄՆ, Նյու Յորք) ներկայացրեց Սարոյանի վեպերի բեմականացման եւ բեմադրության հարցերի շուրջ իր հետաքրքիր դիտարկումները: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ասատրյանը** *«Մարտին Վարդազարյանի երաժշտությունը՝ գրված Վիլյամ Սարոյանի «Մի գավաթ բարություն» («The Beautiful People») պիեսի՝ Համազգային թատրոնում Սոս Սարգսյանի բեմադրության համար»* զեկուցման մեջ կատարեց մի շարք բացահայտումներ՝ շտկելով արդի թատերագիտության եւ թատերական քննադատության մեջ տեղ գտած որոշ անճշտություններ:

Երեկոյան նիստում (համանախագահներ՝ Անուշ Ասլիբեկյան, Արծվի Բախչինյան) Ֆեյրլի Դիքինսոն համալսարանի գրականության, լեզվի, գրարվեստի եւ փիլիսոփայության ամբիոնի պատվավոր պրոֆեսոր **Հարի Քեյիշյանը** (ԱՄՆ, Նյու Ջերսի) հանդես եկավ *«Վիլյամ Սարոյանը որպես մշակութային ֆենոմեն»,* դրամատուրգ, գրող, լրագրող, ամերիկյան ՓԵՆ ակումբի անդամ, 2018-ից՝ Վիլյամ Սարոյան տուն-թանգարանի տնօրենների խորհրդի անդամ **Ռաֆայել Հակոբջանյանը** (ԱՄՆ, Սան Ֆրանցիսկո)՝ *«Վիլյամ Սարոյանը եւ Սան Ֆրանցիսկոն»,* Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանատան մշակույթի կենտրոնում գործող Հայագիտական ամբիոնի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու **Աիդա Մարանջյան-Մարտիրոսյանը** (Ռուսաստան, Մոսկվա)՝ *«Մարդու լինելիության համանվագը Վիլյամ Սարոյանի ստեղծագործական աշխարհում»,* ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի սփյուռքահայ գրականության ուսումնասիրման բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու **Արմեն Ավանեսյանը**՝ *«Վիլյամ Սարոյանի «Ոստրեն եւ մարգարիտը» պիեսի բեմադրությունները Հայաստանում»,* Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի Արեւելյան ֆակուլտետի Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Դոնարա Մկրտչյանը** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ *«Մարդ մնալու արվեստը Սարոյանի ստեղծագործություններում»,* ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրինության փորձագետ, բանասիրական գիտությունների դոկտոր **Լիլիթ Արզումանյանը** (Հայաստան, Երեւան)՝ *«Դիտարկումներ Վիլյամ Սարոյանի պիեսների երեւանյան բեմադրությունների մասին»,* ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու **Արծվի Բախչինյանը**՝ *«Վիլյամ Սարոյանը՝ երգաստեղծ»,* Կաուֆմանի երաժշտական կենտրոնի պրոֆեսոր, երաժշտության դոկտոր **Նունե Մելիքյանը** (ԱՄՆ, Նյու Յորք)՝ *«Վիլյամ Սարոյան եւ Առնո Բաբաջանյան. ամերիկյան եւ խորհրդային լեգենդները»* եւ բեմադրող ռեժիսոր, դոցենտ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, **Հերբերտ Գասպարյանը**՝ *«Վիլյամ Սարոյանը հեռուստաթատրոնում»* զեկուցումներով:

շարունակությունը էջ 11

Վաստակ

Հայ նորագույն տնտեսագիտության ռահվիրան

(ակադեմիկոս Յուրի Սուվարյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Միքայելի Սուվարյանը,** իր ավելի քան 55 տարիների գիտական գործունեությամբ մեծ նվաճումների է հասել տնտեսագիտության ասպարեզում, ակտիվ գիտահետազոտական աշխատանք է կատարել տնտեսագիտության եւ կառավարման տեսության հիմնարար խնդիրների վերաբերյալ: Նա գործնականում կառավարման գիտության արդի հայկական դպրոցի հիմնադիրն է: 1970-1980-ական թվականների նրա աշխատություններում հիմնավորվել են արտադրության արդյունավետության եւ ամբողջական աշխատանքի արտադրողականության գնահատման ու դրանց դինամիկայի կառավարման մեթոդաբանական եւ գործնական հիմնախնդիրների լուծման նոր սկզբունքներն ու եղանակները, որոնք լուսաբանվել են *«Աշխատաքի արտադրողականությունը եւ արտադրության արդյունավետությունը»* (1976թ.), "Про изводительность общественного труда" (1980г.), "Управление ростом производительности труда в промышленности" (1987г.) աշխատություններում:

Մակրոտնտեսական քննական վերլուծության ենթարկելով տնտեսության ինտենսիվացման էության եւ կառուցակարգերի հիմնախնդիրները՝ դեռեւս մինչեւ անցումը շուկայական տնտեսական համակարգին՝ պրոֆեսոր Յու. Սուվարյանն իր *«Էկոնոմիկայի ինտենսիվացման տնտեսական մեխանիզմը»* (1990թ.) աշխատության մեջ, անարդյունավետ համարելով գործող կենտրոնացված պլանային համակարգը, իբրեւ գործող տնտեսական մեխանիզմի զարգացման ուղղություն, հիմնավորել է սեփականության բազմաձեւության եւ շուկայական ենթակառուցվածքների ստեղծման, ռազմավարական կառավարման, մարքեթինգային գործունեության, ազատ առեւտրի ու գնագոյացման անհրաժեշտությունն ու առաջարկում պլանային տնտեսությունից շուկայականին անցնելու տրամաբանությունն ու փուլերը:

Նրա գիտական հետաքրքրությունների ոլորտում են կառավարման տեսության եւ հայ կառավարչական մտքի պատմության արդի հիմնահարցերը: Ակադեմիկոսը ցուցաբերել է նոր մոտեցումներ ռազմավարական կառավարման էության եւ սկզբունքների մեկնաբանման, գործարարության ծրագրի մշակման մեթոդաբանության զարգացման ասպարեզում: Հայ իրականության մեջ պրոֆեսոր Յու. Սուվարյանն առաջինն է անդրադարձել հանրային կառավարման էության, մեթոդաբանության ու պատմական զարգացման հարցերին եւ առաջարկել է յուրօրինակ լուծումներ (*«Ռազմավարական կառավարում. մեթոդաբանությունը եւ արդի հիմնահարցերը»* (1996թ.), *«Գործարարության ծրագրի մշակման հիմունքները»* (1996թ.), *«Կառավարման տեսության արդի հիմնախնդիրներ»* (2020), *«Հանրային կառավարման տեսության ու պատմության ուրվագծեր»* (2004թ.), *«Հանրային կառավարման տեսություն եւ պատմություն»* (2013, համահեղինակ), նույնը անգլերեն (2014 թ.), *«Հանրային կառավարումը ՀՀ-ում. զարգացման ընթացքը եւ բարեփոխումների գերակայությունները»* (2018, համահեղ.), *«Հանրային կառավարման մեթոդաբանական հիմնախնդիրներ»* (2019, համահեղ.), *«Հանրային կառավարման ենթահամակարգերը եւ արդյունավետությունը»* (2021, համահեղինակ) եւ այլ աշխատություններում): Ուշագրավ է պրոֆեսոր Սուվարյանի՝ 2023 թվականին հրապարակած *«Հայկական պետականության կառավարչական հիմնախնդիրները»* մենագրությունը, որում նրա կողմից լուսաբանվել են հին եւ միջնադարյա ժամանակաշրջանում, ինչպես նաեւ XX դարում եւ XXI դարի առաջին քառորդում հայկական պետականությունների կազմավորման եւ գործունեության կառավարչական հարցերը, առաջացած հիմնախնդիրներն ու դրանց լուծման գերակայությունները: Գրքում հատկապես կարեւորվել են հանրային կառավարման համակարգում քաղաքակրթական ու քաղաքագիտական կազմակերպման, ռազմավարության եւ կազմակերպական կառուցվածքների ընտրության, արդի թվային տեխնոլոգիաների կիրառության, պատմության դասերի հաշվառման խնդիրները:

Ի դեպ, անդրադառնալով *«Հանրային կառավարման տեսություն եւ պատմություն»* գրքի անգլերեն հրատարակությանը, Կանադայի Կարլտոնի համալսարանի Հանրային քաղաքականության եւ կառավարման դպրոցի պրոֆեսոր, Կառավարման եւ հանրային մենեջմենթի կենտրոնի տնօրեն Լեսլի Փալը գրել է. *«Շատ տպավորված եմ դրա լայն ընդգրկունությամբ: Շատ հազվադեպ կարելի է հանդիպել մեկին, ով տվյալ ոլորտի պատմությունը տեսնում է նման պատմական խորությամբ եւ, իհարկե տարածաշրջանային պատկերը շատ հետաքրքիր էր ինձ համար»:* Ուշագրավ է նույն համալսարանի վաստակավոր հետազոտող, պրոֆեսոր Ալան Մասլովի կարծիքը. *«Ես, հատկապես, շատ հավանեցի շատ տպավորիչ պատմական գրականության հատվածում «հանրային կառավարում» հասկացության զարգացման քննարկումներն առաջին գլխում: Սա շատ տպավորիչ հոյակապ նկարագրություն է շատ լայն մի թեմայի»:*

Մերիլենդի համալսարանի (ԱՄՆ) հետազոտող Բարբարա Քոուն *«Հանրային կառավարման տեսություն եւ պատմություն»* գրքի մասին գրում է. *«Ես այն շատ բարձր եմ գնահատում: Չեմ կարծում, թե գրվել է մեկ այլ գիրք եւս, որն ընդգրկում է այդքան երկար պատմություն՝ այլ բաների հետ միասին»:*

Քանի որ ազգային տնտեսության ներուժը դրսեւորվում է որպես տարածքային բաղադրիչների ամբողջություն, այս տեսանկյունից էլ պրոֆեսոր Յու. Մ. Սուվարյանը հիմնավորում է հանրապետության արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման արդի ուղղությունները (*«Տնտեսության տարածքային կառավարում. Մեթոդաբանությունը եւ հիմնախնդիրները»* (2007թ. համահեղինակ)):

Սույն աշխատության մեջ առաջարկվում է տեղական ինքնակառավարման նոր երկաստիճան հայեցակարգ. հիմնավորելով անցումը, մարզայինի փոխարեն, գավառային կառավարման համակարգին:

Պրոֆեսոր Յու.Սուվարյանի գիտական հետազոտությունների շրջանակում են նաեւ տնտեսական քաղաքականության ամենաարդիական հիմնախնդիրները: Այդ առումով նրա գիտական ղեկավարությամբ կատարված ուշագրավ եզակի հետազոտություններից է *«Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ առեւտրատնտեսական հարաբերությունները. հնարավոր զարգացումներ եւ միտումներ»* (2010թ., համահեղ.) աշխատությունը, որը բովանդակում է մակրոտնտեսական ցուցանիշների համեմատական դիտարկումներ, ինչպես նաեւ առեւտրա-տնտեսական հարաբերությունների SWOT վերլուծություններ ու երաշխավորություններ: Գիտագործնական հետաքրքրություն են ներկայացնում նաեւ նրա գիտական ղեկավարությամբ կատարված *«Գիտության եւ կրթության ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա»* (*«Բանբեր ՀՊՏՀ»*, թիվ 1, 2010) հետազոտության արդյունքները: Այդ հետազոտությունները շարունակվել են եւ արդյունքում մշակվել տնտեսական աճի վրա գիտակրթական համակարգի ազդեցության գնահատման մեթոդաբանությունը, ազգային նորամուծական համակարգի ներուժի գնահատման սկզբունքները եւ հայեցակարգային գերակայությունները, ոլորտի կառավարման կազմակերպական կառուցվածքի բարեփոխման ռազմավարական ուղղությունները (*«Գիտակրթական համակարգը եւ տնտեսական զարգացումը»* (2011թ.) *«Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը»* (2013թ.), *«Գիտակրթական համակարգը եւ տարածքային տնտեսական զարգացման փոխառնչությունները»* (2016 թ.), *«Ազգային նորամուծական համակարգ. ներուժի գնահատումը եւ հայեցակարգային գերակայությունները»* (2017թ.):



Վերը նշված հրապարակումների շարքում առանձնանում է Յու. Մ. Սուվարյանի *«Տնտեսություն, գիտություն, կրթություն»* ծավալուն մենագրությունը (2014 թ.), որում դիտարկվում են տնտեսության ռազմավարական բարեփոխումների, հանրային կառավարման, գիտության եւ կրթության զարգացման արդի հիմնախնդիրները:

Յու.Սուվարյանի ընդհանուր գիտական խմբագրությամբ եւ համահեղինակությամբ հրատարակվել են *«Մենեջմենթ»* հայերեն բնագիր բուհական առաջին դասագիրքը (1999, 2002, 2009, 2016), *«Հայ կառավարչական մտքի պատմության ուրվագծեր»* (2005)՝ տվյալ ասպարեզին վերաբերող առաջին մեծածավալ հետազոտությունը, *«Ձեռնարկության արդյունավետ կառավարում»* (2001), *«Կիրառական մենեջմենթ»* (2004), *«Ռազմավարական կառավարում»* (2015), *«Պետական եւ մունիցիպալ կառավարում»* (2017) եւ այլ ուսումնական ձեռնարկներ:

Մասնակցել է հանրապետական, համամիութենական եւ միջազգային գիտաժողովների, որոնցում ներկայացրել է իր հետազոտությունների արդյունքները, իսկ դրանց մի մասը լույս է տեսել միջազգային հրապարակումներում: Նա ղեկավարել է մի շարք գործնական ուղղվածության ծրագրերի մշակման աշխատանքները. մասնավորապես՝ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը (1994), ՀՀ երկաթուղային տրանսպորտի բարեփոխումների ծրագիրը (1998), որոնք ընդունվել են հանրապետության գործադիր իշխանությունների կողմից եւ իրագործվել:

Պրոֆեսոր Յու.Սուվարյանը հրատարակել է ավելի քան 300 գիտական աշխատություն, այդ թվում՝ 50-ից ավելի մենագրություն, դասագիրք եւ ուսումնական ձեռնարկ: Նրա գիտական խորհրդատվությամբ ու ղեկավարությամբ տնտեսագիտության դոկտորի եւ թեկնածուի գիտական աստիճաններ են ստացել հարյուրից ավելի ասպիրանտ ու հայցորդ: Հատկանշական է շեշտել, որ կառավարման մասնագիտությամբ գիտական կադրերի մեծ մասը նրա սաներն են:

2006 թ. դառնալով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր՝ Յու. Սուվարյանը մեծ եռանդով ձեռնամուխ է եղել կրթահամակարգի բովանդակային եւ կառուցվածքային արմատական վերափոխումների՝ համահունչ միջազգային պահանջներին: Նրա ղեկավարության շրջանում տնտեսագիտական համալսարանը համալրեց հանրապետության օրինակելի բուհերի առաջատար շարքերը:

Յու.Սուվարյանը 2006-2018 թթ. եղել է ՀՊՏՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ, 2006-2011թթ.՝ *«Բանբեր ՀՊՏՀ»* գիտական հանդեսի գլխավոր խմբագիր, հայրենական ու միջազգային գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների, ինչպես նաեւ հայրենի բարձրագույն խորհրդի անդամ:

Մեծ է պրոֆեսորի ավանդը գիտության բնագավառում: 2006 թ. Յուրի Սուվարյանն ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ իսկական անդամ, 2011 թ.՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Այդ պաշտոնում Յու.Սուվարյանի գործունեության ընթացքում, իր իսկ նախաձեռնությամբ եւ անմիջական մասնակցությամբ ընդունվել եւ իրագործվում են հայագիտության զարգացման համար մի շարք կարեւորագույն որոշումներ: Մասնավորապես՝ 2012 թ. հունվարի 12-ի թիվ 1 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է.

– Հայագիտության զարգացման հայեցակարգը,

– 2012-2025թթ. Հայաստանի Հանրապետությունում հայագիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը,

– ՀՀ հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025թթ. ռազմավարության իրականացման միջոցառումների ժամանակացույցը:

– ՀՀ կառավարության՝ 2012 թ. դեկտեմբերի 6-ի 1688-Ա որոշմամբ՝ ստեղծվել է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ 50 մլն. դրամ բյուջետային ֆինանսավորմամբ:

ՀՀ ԳԱԱ նախագահության եւ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումներով ստեղծվել են.

– «Բանբեր հայագիտության» հնգալեզու գիտական հանդեսը (2013 թ.), որը հրատարակվում է տարեկան երեք համար եւ առաքվում աշխարհի տարբեր երկրների գրադարաններ եւ գիտական կենտրոններ:

– «Հիմնարար հայագիտություն» անգլերեն էլեկտրոնային գիտական հանդեսը (2015 թ.), հրատարակվում է տարեկան երկու համար, եւ ունի ընթերցողների լայն շրջանակ (հասանելի է աշխարհի ավելի քան 140 երկրներում):

Գիտական նշված հանդեսները օտարալեզու ընթերցողներին ներկայացնում են հայոց պատմության եւ մշակույթի նվաճումներն ու հիմնախնդիրները՝ միաժամանակ նպաստելով հայրենի պատմության ու մշակույթի պաշտպանությանը կեղծարարությամբ զբաղվող հարեւանների անհիմն, ոչ գիտական հարձակումներից ու յուրացման փորձերից:

Ակադեմիկոս Յու. Մ. Սուվարյանի նախաձեռնությամբ կազմակերպված միջազգային եւ հանրապետական բազմաթիվ գիտական միջոցառումներից իրենց նշանակությամբ ու բովանդակությամբ առանձնահատուկ են հատկապես Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովը *«Հայագիտությունը եւ արդի մարտահրավերները»* (17-19 հոկտեմբերի, 2013 թ.) խորագրով եւ *«Հայոց ցեղասպանություն – 100. ճանաչումից մինչեւ հատուցում»* միջազգային գիտաժողովը (15-16 հոկտեմբերի, 2015 թ.):

Ակադեմիկոս Յու.Սուվարյանի մասնագիտական բարձր կարողությունները, գիտամանկավարժական վաստակը գնահատված են *«Անանիա Շիրակացի»* (2000), ԼՂՀ *«Մայրական երախտագիտության»* (2007), *«Վաչագան Բարեպաշտ»* (2013), միջազ. փիլիս. Ակադեմիայի *«Դավիթ Անհաղթ»*, *«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար»* 1-ին աստիճանի (2011), ՀՀ Ազգային ժողովի *«Պատվո մեդալ»* (2013թ.) մեդալներով եւ *«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար»* 2-րդ աստիճանի (2017) շքանշանով: 2014 թ.-ին ակադեմիկոս Սուվարյանն արժանացել է Հայաստանի Հանրապետության Գիտության վաստակավոր գործչի կոչմանը: Նա ընտրվել է Բնական գիտությունների ռուսական (2016 թ.) եւ Եվրոպական (2017թ.) ակադեմիաների արտասահմանյան անդամ, Դոնի Ռոստովի պետական տնտեսագիտական, Ռուս-հայկական, Արցախի եւ այլ համալսարանների պատվավոր պրոֆեսոր է:

Մեծ է հարգարժան ակադեմիկոսի ներդրումը Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի զարգացման գործում: Ինստիտուտի կոլեկտիվը սիրով շնորհավորում է մեծն գիտնականի հոբելյանի առթիվ՝ ցանկանալով անսպառ ուժ ու եռանդ, եւ շարունակական գիտական նվաճումներ:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Երաժշտությամբ բժշկելու արվեստը

(հատված Սուրեն Գյուլխասյանի աշխատությունից)

սկիզբը՝ նախորդ համարում

Երաժշտությամբ բժշկելը

Մարդկանց հոգեկան եւ ֆիզիկական առողջության վրա ամոքիչ ներգործության շնորհիվ երաժշտությունն ունի ինքնուրույն բժշկելու հատկություն: Արվեստի եւ բժշկության ասպարեզում մտորումները եւ ֆանտազիան միախառնվելով հանգեցնում են ստեղծարարության: Արվեստը եւ բժշկությունը կյանքի պես միաժամանակ ե՛ւ բարդ են, ե՛ւ պարզ: Կյանքի բարդ թվացող իրավիճակների պարզ հանգուցալուծումների նմանությամբ, բժշկության եւ արվեստի բարդ խնդիրները նույնպես կարող են ունենալ պարզ եւ իմաստուն լուծումներ: Երբեմն որքան բարդ է լինում խնդիրը, այնքան ավելի պարզ է լուծումը:

Երաժշտության բուժիչ ներգործությունը հիմնված է ակնթարթային երանության զգացումի վրա, որը միաժամանակ համակում է մարդու հոգին, միտքը, սիրտը եւ օրգանիզմի ամբողջ բջջային համակարգը: Ըստ անտիկ բժշկության հիմնադիր Հիպոկրատի, *«բժշկությունը բնության բուժիչ ազդեցության նմանակման (միմեսիսի), հիվանդությունների մասին պատկերացման, իմաստավորման եւ բուժման վերաբերյալ մտորումների եւ ֆանտազիայի արվեստ է»:*

Ժամերգությունը

Բոլոր կրոններում ժամերգությունը, աղոթքները եւ ծեսերը կազմում են վանական կյանքի անբաժանելի մասը: Դեռեւս հին ժամանակներից հոգեւորականները կիրառել են երաժշտական թերապիան տարբեր հիվանդությունների բուժման համար, որոնք համարվում էին մարդու կողմից թե իր, թե այլ մարդկանց հանդեպ կատարած սխալների հետեւանք: Հոգեւորականներն այցելում էին տառապյալ եւ մահամերձ մարդկանց՝ ջանալով թեթեւացնել նրանց տանջանքները այդ թվում նաեւ շարականներ երգելով: Առողջ եւ հիվանդ մարդկանց հոգու երաժշտության գաղտնիքները բացվում էին ճգնավորների առջեւ՝ իրենց մաքրված հոգու, մտքի եւ մարմնի գաղտնիքների բացահայտման շնորհիվ: Հիվանդների բուժման ժամանակ երգվող շարականներով նրանք դիմում էին Արարչին՝ հայցելով օգնություն:

Հոգեւորականները համարում էին, որ մարդու ֆիզիկական մարմնի հիվանդությունը սկսվում է նրա ախտահարված գիտակցությունից, որը դուրս է եկել հոգու վերահսկողությունից եւ դադարել է լսել նրա ներքին ձայնը՝ խիղճը: Կենդանական բնազդներին տուրք տալով՝ գիտակցությունը հասցնում է մարմինը հիվանդության, դրանով իսկ տառապանքներ պատճառելով թե մարմնին, թե հոգուն: Ճշմարիտ բժշկությունը, արվեստը եւ շարականները գործում են պարզ սկզբունքով. բուժել հիվանդի հոգին՝ նրա գիտակցությունը եւ մարմինը մաքրելով ախտածին երեւույթներից, որոնք հանգեցրել են հիվանդության:

Բուժման այդ սկզբունքը կարող է օգնել միայն այն հիվանդներին, որոնք հմուտ բժիշկ-վանականի օգնությամբ գիտակցել են իրենց հիվանդության պատճառը, անկեղծորեն ապաշխարել են եւ լցվել ախտածինից ազատվելու ցանկությամբ: Ինտուիտիվ ռեզոնանսով անդրադառնալով երկնքից, շարականները կապ են հաստատում բուժողի եւ հիվանդի միջեւ: Դարերի ընթացքում կուտակված փորձի շնորհիվ՝ հոգեւորականները մշակել են երաժշտությամբ բժշկելու իրենց մեթոդաբանությունը, որը կախված է հիվանդության բնույթից: Ամեն կոնկրետ դեպքի համար ընտրվում էին բովանդակությամբ առավել համապատասխանող շարականներ: Հաճախ հոգեւորականը փոխում էր շարականը: Պատահում էր, որ շարականը ծնվում էր ինքնաբուխ՝ հենց հիվանդի մահճակալի մոտ:

Այցելելով ծանր հիվանդին՝ հոգեւորականն անկեղծ կապ էր հաստատում նրա հետ՝ ջանալով օգնել նրան ինքնուրույն փնտրել սեփական հիվանդության պատճառը: Նա փորձում էր հիվանդի հետ միասին անցնել հիվանդության զարգացման եւ ֆիզիկական մարմնի ախտահարման ուղին: Բուժումն իմաստ ուներ շարունակել միայն հիվանդի կողմից իր կատարած սխալների գիտակցումից եւ անկեղծ ապաշխարումից հետո: Հոգեւորականի միջնորդությամբ շարականներն ուղեկցում են հիվանդի հոգեւոր ապաշխարությունը: Դրանց միջոցով հոգեւորականն Արարչից հայցում է գթասրտություն եւ օգնություն:

Երբ այդպիսի միջամտության արդյունքում մարդը հասնում է ներդաշնակ եւ հանգիստ վիճակի, վերջինս փոխանցվում է օրգանիզմի ամբողջ բջջային համակարգին, ինչը նպաստում է ուժերի վերականգնմանը եւ առողջացմանը: Օրգանիզմի հումորալ միջավայրները մաքրվում են կուտակված մետաբոլիտներից (օրգանիզմի կենսագործունեության արգասիքներից): Շարականների երաժշտությամբ առաջացրած ռեզոնանսը մարդկանց հոգուց թոթափում է հիվանդությունն ուղեկցող հոգսերի եւ տխրության նստվածքը՝ որպես *«մեղսավոր կյանքի»* սխալների հետեւանք: Ըստ Հիպոկրատի բժշկության՝ *«ավելացնելու եւ պակասեցնելու»* սկզբունքի, հիվանդները բուժվում են վնասակարը պակասեցնելով եւ օգտակարն ավելացնելով:

Հոգեւոր երաժշտական ինֆորմացիան հիմնականում բերնեբերան է փոխանցվել հոգեւորականների սերունդներին եւ հարստացել ժամանակի ընթացքում: Մատենադարում պահվում են հայ միջնադարյան երաժշտական գրության արվեստի՝ խազագրության նմուշներով բազմաթիվ տեքստեր, որոնց մի մասն է վերծանված միայն:

Խազագրություն, *հայ միջնադարյան երաժշտական գրության արվեստն: Ձեւավորվել է VIII դարից: Գաղափարի ծագումն ու սկզբնական իրականացումը կապված են Ստեփանոս Սյունեցու անվան հետ: Խազագրության հետագա մշակմանն ու զարգացմանը մասնակցել են Գրիքոր Գռզիկը (Այրիվանեցի), Անանիա Նարեկացին, Խաչատուր Տարոնացին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Խալը, Գեւորգ Սկեւռացին, Թովմա Մեծոփեցին, Գրիգոր Խլաթեցին եւ ուրիշներ:*

Պահպանվել է շուրջ 2000 գիրք (ավելի քան 1000-ը՝ Երեւանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում) եւ շատ պատառիկներ, որոնք բովանդակում են հայ մասնագիտացված միաձայն երաժշտության դեռեւս V դարից երգված բազմաթիվ ստեղծագործությունների խազագրումներ: Դրանք, սակայն, առ այսօր լրիվ ընթեռնելի չեն, քանի որ չի հայտնաբերվել խազագրության սկզբունքը բացահայտող գրավոր շարադրված որեւէ ամբողջական ուսմունք: XVI - XVIII դդ. խազերը կարդալը հետզհետե մոռացվել է (թեեւ երգերը շարունակել են արտագրել, XVII դարից՝ նաեւ տպագրել), իսկ XIX դարի սկզբում դրանք իրենց տեղը զիջել են նոր-հայկական ձայնագրությանը:

Միջնադարում երաժշտական սրբազան գիտելքիները գաղտնի էին պահվում այն ժամանակվա *«շոու բիզնեսի»* ճարպիկներից, որոնք բոլոր ժամանակներում պատրաստ են նյութական շահ կորզել ինչից ասես, ումից ասես եւ ինչպես ասես:

Երաժշտության *«անատոմիան եւ ֆիզիոլոգիան»*

Ըստ հին փիլիսոփաների՝ երաժշտությունը, ինչպես եւ այն ստեղծած մարդը, ունի իր հոգին՝ մեղեդին, բնավորությունը՝ ռիթմը եւ մարմինը՝ հնչյունը: Իր ֆիզիկական մարմնի միջոցով երաժիշտը փոխանցում է երաժշտության ֆիզիկական մարմինը օդային մեխանիկական տատանումների՝ պատկերավոր ասած, *«երաժշտական մորզեի»* այբուբենով: Ճշմարիտ երաժշտությունը ընկալվում է ենթագիտակցաբար եւ ինտուիտիվ կերպով գրեթե ակնթարթորեն՝ առաջին սիրո պես: Այդ գործընթացում գիտակցության սթափեցնող մասնակցությունը բացակայում է. այն միանում է ավելի ուշ: Նախքան այդ ենթագիտակցությունը հասցնում է ուղարկել երաժշտական ուղերձը ինտուիցիայի տիրույթ՝ ուրցագեղձին, որը պատասխանատու է հոգեւոր մակարդակում շփման անվտանգության համար: Համոզվելով, որ ուղերձն անվտանգ է եւ պիտանի, ենթագիտակցությունն այն փոխանցում է գիտակցությանը, որն էլ իր հերթին փոխակերպում է գիտակցական զգայական կերպարների եւ ընկալում: Միաժամանակ կատարվում է նաեւ ուղերձի պիտանելիության փորձաքննություն *«մաշկային լսողության»* միջոցով: Մարդու վրա երաժշտության ներգործության մեխանիզմն ավելի լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է ծանոթանալ ինտուիտիվ ֆունկցիայի՝ 3-րդ ազդանշանային համակարգի հետ:

Ինտուիցիա (ներըմբռնում)

Ըստ ընդունված սահմանման՝ ինտուիցիան իրադարձությունների եւ երեւույթների իմաստը առանց կշռադատելու կամ ապացուցելու, այսինքն՝ առանց գիտակցության մասնակցության ընկալելու ունակություն է: Երբեմն այն անվանում են նաեւ զգայականություն, հոտառություն, խորաթափանցություն կամ զգայականություն: Ըստ Իբն-Սինայի՝ *«Ինտուիցիան հոգու հատկություն է, որը հայեցությամբ պայծառացնում է գիտակցությունը: Ճշմարիտի հայեցումը կատարվում է երեւակայության հատուկ օրգանի միջոցով, որը պատկերացումների եւ երեւակայությունների ուժերից կազմված ներքին զգացողություններով արթնացնում է մտածողության ուժը»* (Իբն Սինա, Մետաֆիզիկա, փիլիսոփայական երկեր): Հավանական է, որ նա նկատի ուներ ուրցագեղձը՝ տիմուսը:

Ուրցագեղձը՝ տիմուս

Տիմուսը, որպես ինտուիցիայի գլխավոր օրգան, բնության կողմից տրված է մարդուն կյանքի առաջին օրվանից արտաքին վտանգներից պաշտպանելու համար: Պատահական չէ, որ տիմուսը բավականաչափ զարգացած է եւ ունի մեծ չափեր նորածինների, շատ զգայուն եւ ստեղծարար մարդկանց, ինչպես նաեւ պայծառատեսների եւ բախտագուշակների մոտ: Արդի բժշկությամբ հաստատված է, որ ուրցագեղձը իմունային համակարգի գլխավոր օրգանն է: Այն ապահովում է ներքին անվտանգությունը վարակներից եւ թույներից, վնասված եւ մաշված հյուսվածքների (մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների, արյան կարմիր եւ սպիտակ գնդիկների) վերականգնողական գործընթացները: Մարդը ծնվում է լիովին ձեւավորված ուրցագեղձով, որը շարունակում է աճել մինչեւ սեռական հասունացման տարիքը, եւ դրանից հետո դանդաղորեն հետ է աճում՝ կյանքի մայրամուտին խորշոմելով, փոքրանով եւ ֆունկցիաները դադարեցնելով:

Գեղձի ծերացմանը նպաստում են ծանր սթրեսները, ինչպես նաեւ մարդու բնավորությունը: Պետք է հաշվի առնել, որ նույնիսկ ամենաթեթեւ սթրեսից հետո մարդուն պետք է առնվազն 2 ժամ նեյրոհումորալ հավասարակշռության վերականգնման համար: Ուրցագեղձն ակտիվորեն մասնակցում է սթրեսային իրավիճակների հանգուցալուծմանը: Դա հանգեցնում է գեղձի հիվանդությունների եւ նույնիսկ ատրոֆիայի, որը փոխանցվում է այլ գեղձերին՝ էպիֆիզին, հիպոֆիզին, ենթաստամոքսային գեղձին, վահանաձեւ գեղձին, որոնք նույնպես մասնակցում են հետսթրեսային վերականգնողական պրոցեսներում: Գեղձի խորշոմումը անդրադառնում է իմունային համակարգի վրա՝ առաջացնելով իմունիտետի եւ ինտուիցիայի նվազում եւ էնդոկրին եւ նյարդային համակարգի հիվանդություններ՝ շաքարային դիաբետ, տիրոտոկսիկոզ, նեվրոզ, ընճախտ, զանազան վախեր եւ այլն:

Գեղձի ծերացումը բերում է նաեւ ուղեղի, տարբեր օրգան համակարգերի եւ ընդհանուր առմամբ՝անհատի ծերացմանը: Ապացուցված է, որ խելամիտ կենսակերպի դեպքում գեղձը կարող է ակտիվորեն գործել եւ ծառայել մարդուն մինչեւ 120 տարեկանը:

Տարիքի եւ փորձառության հետ մարդն ավելի շատ առաջնորդվում է գիտակցությամբ, քան ենթագիտակցությամբ, ինտուիցիայով եւ խղճով: Գուցե դա պայմանավորված է նրանով, որ խղճի ձայնով առաջնորդվելը միշտ չէ, որ շահավետ է: Որքան բարձր է հնչում գիտակցության ձայնը, այնքան քիչ լսելի է հոգու ներքին ձայնը՝ խիղճը եւ այնքան ավելի քիչ է աշխատում եւ զարգանում ինտուիտիվ ֆունկցիան: Վերջինս էլ հանգեցնում է ուցագեղձի, հետո էլ ամբողջ օրգանիզմի բջիջների ծերացմանը: Այդպես է տեղի ունենում բանական մարդու անժամանակ ծերացումը սկզբից հոգով, այնուհետեւ՝ մարմնով:

Ստեղծագործ մարդկանց ինտուիտիվ ֆունկցիան կարող է պահպանվել եւ նույնիսկ շարունակել զարգանալ մինչեւ կյանքի վերջը: Այդպիսի մարդիկ ավելի ուշ են ծերանում թե՛ հոգով, եւ թե մարմնով: Որոշ տարեց մարդիկ պահպանում են առողջ հումորի զգացումը, ինչը կարող է անուղղակի ձեւով վկայել ուրցագեղձի աշխատանքի մասին:

Առողջ հումորը, լիաթոք ծիծաղը հոգեհարազատ մարդկանց շրջապատում ամենաօգտակար բանն է մարդու հոգեկան, մտավոր եւ ֆիզիկական առողջության համար: Առողջ ծիծաղն օգտագործվել է դարերի ընթացքում հոգեկան ցնցումների հետեւանքներից ազատվելու համար: Ծիծաղը հոգու համար նույնն է, ինչ փոշտալն ուղեղի համար. երկուսն էլ պայմանավորված են ինքնամաքրման պահանջով:

Իր ինտուիտիվ ֆունկցիայի շնորհիվ՝ տիմուսն ակտիվորեն մասնակցում է երաժշտության վերծանման եւ ընկալման գործընթացում: Տիմուսի եւ նեյրոհումորալ համակարգի միջեւ ինֆորմացիոն կապը ապահովվում է նյարդային ուղիների եւ օրգանիզմով հոսող հեղուկների միջոցով:

Նրանց միջոցով նեյրոհումորալ համակարգը փորձաքննության նպատակով ուրցագեղձին է ուղարկում բոլոր զգայարաններից ստացված ինֆորմացիան շրջակա միջավայրի մասին, այդ թվում նաեւ երաժշտականը՝ լսողական օրգանից եւ մաշկային ծածկույթներից: Գեղձից դրական արձագանք ստանալուց հետո նեյրոհումորալ համակարգը ռեզոնանսով այն փոխանցում է օրգանիզմի բոլոր բջիջներին սրտի եւ լյարդի միջոցով: Այդ ռեզոնանսի բերած կարճատեւ խորը *«երաժշտական քնից»* հետո ուժերը վերականգնած բջիջները առողջանում են՝ առողջացնելով նաեւ ֆիզիկական մարմինը: Օրգանիզմի, մասնավորապես՝ ուղեղի բջիջների առողջացումը նպաստում է բանականության եւ վերջինիս կողմից պաշտպանվող հոգու առողջացմանը: Օրգանիզմի բջիջների առողջացումը, մասնավորապես ուղեղի բջիջներինը նպաստում է նրա արգասիքը հանդիսացող բանականության, ուստի եւ վերջինիս կողմից պաշտպանվող հոգու առողջացմանը:

շարունակությունը էջ 11

Սարոյանագիտության մեջ աննախադեպ միջազգային գիտական կոնֆերանս

սկիզբը՝ էջ 8

